Պատկերացնում եք՝ Դանիայի իշխանություններն ասեին՝ ինչ վատ բան կա Գրեւլանդիան ԱՄՆ-ին հանձնելու մեջ, այնտեղ միլիարդների ներդրումներ կարվեն, աշխատատեղեր կստեղծվեն, Դանիայի քաղաքացիների բարեկեցությունը կբարձրանա, ԱՄՆ-ը պատրաստ է նույնիսկ մի քանի միլիարդ էլ Դանիային տալ՝ կբաժանենք ժողովրդին, գոհ կմնան:

Կարդացեք՝ էջ 5

«Պահանջում ենք, որ գլխավոր դատախազությունը, հետախուզության, անվտանգության ծառայությունը եւ բոլոր իրավասու մարմինները անհապաղ սկսեն հնարավոր դավաճանության մասով հետաքննություն», Մոլդովայի ընդդիմությունը պահանջում է քրեական վարույթ հարուցել Մայ Սանդուի դեմ՝ երկրի ինքնիշխանության դեմ ոտնձգության համար:

Կարդացեք՝ էջ 6

Դուք լսած կայի՞ք, որ վարչապետը կոնդակ գրի: Գրել է, այն էլ 2 հատ: Առաջինով հայտարարել է, որ չի ընդունում Կաթողիկոսի որոշումը թեմակալ առաջնորդ փոխելու մասին, երկրորդով՝ պաշտոնալույծ «սրբազանին» կրկին կարգել է «սրբազան»: Վարչապետ մի ասա, մի կրակ ասա... Թքում-մրում ես, ամոթ է, ասում է՝ անձրեւ է գալիս:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 1 (4116), 20 հունվար, երեքշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Բանակի գնդերեցներին դավանափոխ անելու եւ Վեհափառ հայրապետի դեմ արշավանքին մաս դարձնելու ՊՆ ղեկավարության ջանքերը կարծես արդյունք չեն տալիս: Վերջին օրերին տեղեկություններ են տարածվում, թե որոշ բարձրաստիճան զինվորականներ, չարաշահելով իրենց պաշտոնեական լիազորությունները, ճնշում են գործադրում գնդերեցների վրա՝ սպառնալիքների եւ այլ միջոցներով փորձելով նրանց ներքաշել Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած «եկեղեցու բարենորոգման» արշավի մեջ: Բանակի բարձրաստիճան սպաներից մեկը մեզ փոխանցեց, որ երկու-երեք հոգեւորականի է հաջողվել դավանափոխ անել, այն էլ՝ մեծ խոստումների գնով, որ բնակարանով կապահովեն, ֆինանսապես կաջակցեն: Կորպուսի հրամանատարները կանչում են հոգեւորականներին, համոզում, թե բանակը մեկ ընդհանուր օրգանիզմ է, եւ եթե Փաշինյանն ու Պապիկյանը եկեղեցու դեմ նման դիրքորոշում ունեն, ապա բոլորս պարտավոր ենք նման դիրքորոշում ունենալ: Սակայն գնդերեցների ճնշող մեծամասնությունը ոչ միայն մերժել է, այլեւ նախատել բարձրաստիճան զինվորականներին՝ քաղաքական իշխանության խաղերի մեջ մտնելու համար, ասել են, որ բանակը դրանով ոչ թե պետությանն է ծառայում, այլ՝ ՔՊ-ին:

Օրերս պաշտոնապես հայտնի դարձավ, որ Ստեփանավանի բժշկական կենտրոնի արդեն նախկին տնօրեն Անուշ Իսպիրյանին մեղադրանք է առաջադրվել՝ իրեն վստահված գույքը հափշտակելու եւ խարդախության հոդվածներով: Իսպիրյանը, ըստ մեղադրանքի, կեղծ բուժառուների է գրանցել եւ պետությունից գումար ստացել՝ իրականում բուժում չստացած մարդկանց համար: Նա ԲԿ տնօրեն էր նշանակվել մոտ 3 տարի առաջ՝ 2021 թ. ամռանը: Մեր տեղեկություններով՝ այդ հարցում գործուն ջանքեր է գործադրել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը: Գաղտնիք չէ, որ Ստեփանավանում հենց նա եւ հայրն են բոլոր ոլորտներում կադրային քաղաքականություն իրականացնում, եւ Անուշ Իսպիրյանը, որը Պապիկյանի հոր ընկերոջ դուստրն է, նշանակվել է հենց նրա հովանավորությամբ, չնայած բժշկական հաստատության կոլեկտիվը կտրականապես դեմ էր այդ նշանակմանը: Ի դեպ, խոսակցություններ կան, որ նրանց նշանակած այլ կադրերի նկատմամբ էլ են իրավապահներն ուսումնասիրություններ սկսել: Հավանաբար, ընտրություններից առաջ Փաշինյանը փորձում է այս ճանապարհով բոլորին վերահսկելի դարձնել:

Անդրադարձ

Նախկինների «կրակն» անշեջ պահող Նիկոլ Փաշինյանը մեղքն այլոց վրա բարդելու հարցում անզուգական ֆանտազիա եւ մեծ համառություն է դրսեւորում: Հարցնում են՝ Ամանորի տոներին հազարավոր բնակիչներ հոսանք չունեին, ակնհայտ է, որ ՀԷՑ-ը սեփականատիրոջից խլելը բացասաբար է ազդել էներգետիկ համակարգի եւ բնակչության էներգապահովման վրա, ասում է՝ ՀԷՑ-ի նախկին սեփականատերն է մեղավոր: Այն սեփականատերը, որից դեռ 7 ամիս առաջ խլել են ընկերությունը եւ իրենց իբրեւ թե ամենահմուտ «մենեջերին»՝ Ռոմանոս Պետրոսյանին, կարգել են գլխին: 8 տարի շարունակ «նախկինների» առասպելը հյուսող Փաշինյանը, սակայն, գաղտնի է պահում հայ ժողովրդից, թե որ պահից է սկսվելու իր պատասխանատվության պահը: Որ պահից սկսած են ձախողումների ու տապալումների, երկրում տեղի ունեցող վթարների, Հայաստանի կորուստների համար մեղավոր ճանաչվելու ինքն ու իր թիմը: Իսկ գուցե այդ պահը երբեք էլ չի՞ գալու: Այսպես ասած՝ 8 տարվա վակուում ենք ունենալու: Իրենց ձախողումների համար պատասխանատու են նախկինները, իսկ հաջորդ իշխանությունների ձախողումների համար պատասխանատվություն կկրեն գործող իշխանությունները: Բայց մենք, որ 30-40 տարի ապրել ենք այս երկրում, չենք հիշում, որ 90-ականների ծանր օրերին Տեր-Պետրոսյանի իշխանությունը գեթ մեկ անգամ իր անհաջողությունները, մութն ու ցուրտը, պակաս-պռատը բացատրեր սովետական իշխանության սխալներով: Կամ՝ Ռոբերտ Քոչարյանն իր ժամանակ կատարվող նեգատիվ իրադարձությունների մեղքը գցեր Լեւոն Տեր-Պետրոսյանի վրա, Սերժ Սարգսյանն էլ արդարանար, թե Ռոբերտ Քոչարյանն է վատ կառավարել: Ես շատ լավ հիշում եմ, որ նախարարի պաշտոնը 10 օր առաջ ստանձնած պաշտոնյան տարեվերջյան հաշվետվություն էր տալիս՝ ներառելով նաեւ իր նախորդի ժամանակաշրջանը:

Մեր տեղեկություններով, ընտրություններին ընդառաջ, ներքին հրահանգ է իջեցվել բանակի ատեստացիայի հանձնաժողովներին, որպեսզի հնարավորինս բարձր գնահատեն զինծառայողների քննությունները, եւ հնարավորինս մեծ թվով զինվորականների աշխատավարձեր բարձրանան: Շատ զինվորականներ, ովքեր մինչ այժմ տարբեր պատճառներով չէին մասնակցում ատեստավորման գործընթացին, քանի որ հաճախ կտրվում էին քննություններից, իմանալով այդ հրահանգի մասին՝ դիմել են, որ օգտվեն նախընտրական նպաստավոր պահից:

Հ1-ի «մասսովկան» տարիներով չի վճարվում

Հանրային հեռուստաընկերությունը ձգձգում է քաղաքական, երաժշտական, շոու եւ այլ ծրագրերի «մասսովկայի» մասնակցող հանդիսատեսի վարձատրությունը՝ «էսօր կտանք, վաղը կտանք»: Հանդիսատեսը հիմնականում թոշակառու կանայք են, որոնց խոստացված գումարն ինչքան էլ չնչին՝ «մատից մի փուշ կհանի»: Բայց այլեւս չեն հավատում դատարկ խոստումներին: Մեզ ասացին, որ տարիներով կուտակված պարտքեր կան: Հեռուստաընկերությունը ոմանց պարտք է 2023-ից սկսած: Տարեց կանայք խոստացված գումարները ստանալու պահանջով դիմել են ծրագրերի համակարգողին, բայց պատասխան չեն ստացել: «Ժամերով տաղավարում նստելն ու հաղորդման ձայնագրությանը մասնակցելը չափազանց հոգնեցնող ու ձանձրալի է. բարձր ձայներ, աղմուկ, լուսարձակներ... Մենք այն տարիքում չենք, որ դիմանանք դրան, մեզ այդ ռիսկին մղողը փողն է, որ խոստացել են ու չեն տալիս»,- ասաց կանանցից մեկը: Զանձրալի են հատկապես քաղաքական հաղորդումները, որոնց բովանդակությունը երբեմն իրենք դժվար են ընկալում: «Մեր ներկայությունն ուղղակի ծափեր ապահովելու համար է: Երաժշտական հաղորդումները՝ դեռ ոչինչ. գոնե երգ ու երաժշտություն է, թեեւ էլի հեշտ չէ ժամերով նստել նայելը, թե ոնց են հաղորդումը ձայնագրում»: Ամենաէժանը Պետրոս Ղազարյանի «Մեծ բանավեճ» հաղորդման հանդիսատեսի վճարն է. 1 հաղորդման մասնակցելու համար՝ 1600 դրամ: Մի փոքր ավելի՝ 2 հազար դրամ արժե «Երգ երգոցին» մասնակցելը: Ամենաթանկը կինոնկարների «մասսովկաներն» են՝ 5 հազար դրամ, որին քչերն են մասնակցում: Հանրայինը «հանդիսատեսի» հետ պայմանագիր չի կնքում, որ պարտք ու պահանջի թեմա չբացվի: Կանանցից ոմանք, որպեսզի խաբեության զոհ չդառնան, փորձել են պայմանագիր կնքելու առաջարկ անել, բայց նրանց ասել են՝ բավարարվեք նրանով, որ հաշվառված եք:

ԻՐԵՆՑ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՏԱՐԵ՞Լ ԵՆ, ՈՐ ԱՅԴՔԱՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մոտ 11 մլն 951 հազ. դրամ պարգեւավճար է ստացել՝ 2025-ի առաջին կիսամյակի կատարողականի գնահատման արդյունքային ցուցանիշների համար:

Դրանից բացի՝ մոտ 1 մլն 970 հազար դրամ էլ առանձին տողով է պարգեւատրվել: Ազգային Ժողովի բոլոր պատգամավորները ստացել են 3 միլիոն դրամ պարգեւավճար: Նախարարները՝ 6-7 միլիոն, փոխվարչապետները՝ 8-9 միլիոն: Ահռելի պարգեւավճարներ են ստացել պետական գերատեսչությունների ղեկավար կազմերը՝ ՊԵԿ-ից մինչեւ Սփյուռքի հանձնակատարի գրասենյակ, մինչդեռ հայ ժողովուրդը, թոշակառուները, անապահովները, արցախցիները հազիվ ծայրը ծայրին են հասցնում՝ չիմանալով, թե իրենց ստացած գրոշներով դեղորմ՞յք գնեն, օրվա հմ՞ց, թե՞ կոմունալներն ու հարկերը վճարեն: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է ֆինանսների նախկին նախարար **Վարդան Արամյանի** հետ:

- Հասարակությունը շոկի մատնվեց՝ անսպասելիորեն տեղեկանալով, թե Հայաստանի նման աղքատ երկրում ինչ շռայլ պարգեւավճարներ է ստացել չինովնիկների ղեկավար հատվածը: Ի վերջո, եթե այս ամենը դիտարկենք օրենքի տեսանկյունից, ինչ է ստացվում, իշխանություններն ինչ օրենքներ են շրջանցում, ինչ պիլոտային ծրագիր է իրականացվում, ինչպե՞ս եւ ինչո՞ւ են նման չաղլիկ պարգեւավճարներ բաշխվում, օրենքն ինչ է ասում այս մասին:

- Օրենքի առումով եկեք ամեն ինչին նայենք ռեալ աչքերով: Այսօր իշխող ուժը ցանկացած նոր օրենք կարող է անցկացնել, այլ հարց է, որ «Բյուջեի մասին» օրենքը նույնպես օրենք է, սակայն կարող են առաջ քաշել դրույթներ, ըստ որոնց, օրինակ, պատգամավորի պարգեւավճարը կարող է աշխատավարձից ավել լինել տասն անգամ, կամ սահմանեն պարգեւատրման ֆոնդ, որը բյուջեով կփաթեթավորեն: Այնպես որ, օրենքի կարգավորումները ցանկացած բան կարող են կարգավորել: Այլ հարց է, թե դրանք որքանով են տրամաբանական ու ադեկվատ, ընդունելի: Դեռ 2017 թվականն էր, երբ մենք քննարկում էինք «Եկամտային հարկի վերադարձի մասին» օրենքի դրույթները, ծրագրի շրջանակներում փորձելով զսպաշապիկներ հագցնել: Այդ ծրագրի մասով իմ դիրքորոշումը չի փոխվել: Այն ժամանակ էլ բարձրաձայնում էի, որ այն պետք է լինի նպատակային եւ ժամանակավոր, հակառակ դեպքում այն հասարակության մեջ բեւեռացում է առաջացնելու, ստացվելու է՝ հարուստին ավելի շատ ես հարստացնում, աղքատին ավելի շատ ես աղքատացնում: Երբ ես նախարար էի, մի բանավեճի ժամանակ ասացի, որ իմ նախարարական հաշվարկի համաձայն, որպեսզի ես 55 միլիոն դրամանոց բնակարան ձեռք բերեմ, ինձ պետք է դրա համար նախարարական աշխատավարձ, քանի որ միայն այդ աշխատավարձն է ինձ թույլ տալիս այդ արժողությամբ բնակարան ձեռք բերել: Այնուհետեւ հարց տվեցի՝ ես այժմ միջի՞ն եկամուտներ ունեցող մարդ եմ, թե՞ ցածր: Որոշ գործընկերներ ինձ ասացին, որ ես պատկանում եմ միջին խավին: Ցավալի է, որ այդ ժամանակ, երբ միջին աշխատավարձը 250 հազարն էր, ես, լինելով բարձր խավի աշխատող, ունեի նման եկամուտ: Ինչ վերաբերում է այսօրվա պարգեւավճարներին, լավ մասնագետին, արհեստավարժին, որը շուկայում ունի բարձր գին, օրինակ, ենթադրենք՝ եթե նրա ամսական աշխատավարձը 5 միլիոն դրամ է՝ ռեֆորմներ իրականացնելու համար, գուցե այդտեղ լիներ որոշակի տրամաբանություն, սակայն պետք է հաշվի առնել հանրային հատվածին, որտեղ միայն նախարարներն ու իր տեղակալները չեն, այնտեղ ամբողջական թիմ է աշխատում: Ցանկացած նախարարությունում, որտեղ գործն առաջ է գնում, հավատացած եղեք՝ շատ մեծ բան է կախված թիմից, այլ ոչ թե միայն նախարարից ու իր տեղակալներից: Որքանով ես տեղյակ եմ՝ նախարարություններում վարչության պետերը, աշխատակիցները եւ մյուս աշխատակիցները ստացել են բավականին քիչ պարգեւատրում, այստեղ կա խնդիր, կարող է դժգոհության առիթ դառնալ: Չեմ ցանկանում անձնավորել, սակայն նույն ԱԺ-ում կան բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր նույնիսկ բարձրագույն կրթություն չունեն: Պատկերացրեք՝ կա մարդ, որն ունի բարձրագույն կրթություն, իր ոլորտում արհեստավարժ է, սակայն ՔՊ-ի անդամ չէ եւ պաշտոն չի զբաղեցնում, ուստի չի ստանում 3 միլիոնի պարգեւավճար: Ի՞նչ է սա, եթե ոչ հոգեբանական ճնշում:

- Խոսում են ինչ-որ պիլոտային ծրագրի մասին, հղումներ են կատարում դրան, սակայն ի՞նչ է ասում օրենքը՝ վարձատրության եւ պարգեւավճարների մասին:

- Գոյություն ունի Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության վերաբերյալ օրենք, որտեղ կա 22-րդ հոդված, որը կապված է պլանավորման հետ: Խոսքն այն մասին է, թե որքան պետք է կազմի ընդհանուր պարգեւատրման ֆոնդը: Այնտեղ նշված է, որ յուրաքանչյուր տարվա պարգեւատրման ֆոնդ կազմվում է տարվա բյուջեով՝ աշխատավարձի 10 տոկոսի չափով: Ըստ այս օրենքի, կարող է հարյուր հազար դրամ աշխատավարձ ստացողը ստանալ 500 հազար դրամ պարգեւավճար, սակայն սահմանափակումն այստեղ է՝ մեկ դրույթ կա, որտեղ ասվում է, թե ինչի դիմաց պետք է տրամադրվի տասը տոկոս պարգեւատրում, այն տրվում է կիսամյակային հաշվետվությունների վրա: Սա նշանակում է, որ Հաշվեքննիչ պալատն այս ամենից հետո պետք է այցելի տարբեր գեատեսչություններ եւ հստակեցնի՝ որքան է եղել պլանավորված գումարի չափը, եւ որքան է տրամադրվել: Հետո պետք է պարզել՝ արդյո՞ք կատարողականը եղել է դրական, եւ, վերջապես՝ շաղկապվածություն պետք է լինի ծրագրային դրույթների հետ: Օրինակ՝ եթե հանցավորության թվերն աճում են, ինչո՞ւ է ոստիկանությունը ստանում պարգեւավճար, եթե ես վախենում եմ իմ երեխաների անվտանգության համար, եթե գրեթե ամեն օր դրսում երիտասարդ է դանակահարվում կամ գնդակահարվում, ինչո՞ւ է Ոստիկանությունը ստանում նույնքան պարգեւատրում, որքան, ասենք, ՊԵԿ-ը, որը կարողացել է իր առջեւ դրված խնդիրները լուծել: Կամ՝ արդարադատության նախարարությունը իրավական ոլորտի կայացման հարցում իր առջեւ դրված խնդիրները կատարո՞ւմ է, որ ստացել է այդքան մեծ չափերի պարգեւատրում: Մոտեցումը պետք է լինի այս տրամաբանությամբ:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Հովիկ Աբրահամյանի խափանման միջոցը փոխել են

Հայաստանի նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի խափանման միջոցը 2025-ի տարեվերջին փոխվել է: Տեղեկացանք, որ նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցները՝ վարչական հսկողությունը եւ բացակայելու արգելքը, դատարանը՝ դատավոր Արամ Գրիգորյանի նախագահությամբ, փոխարինել է 20 միլիոն դրամ գրավով: Աբրահամյանի պաշտպան Էմին Խաչատրյանն ասաց, թե փակ նիստ է եղել, չի կարող ասել՝ որքան գրավ է կիրառվել, եւ ինչու է փոխվել խափանման միջոցը: Նախօրեին Աբրահամյանին տեսել են Ֆրանկֆուրտից Երեւան վերադառնալիս: Նշենք, որ նախկին բարձրաստիճան պաշտոնյան մեղադրվում է փողերի լվացման, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու հոդվածներով: Գործը հարուցվել է դեռ 2018-ին, դատարան է մտել միայն 7 տարի անց: Փաստացի, Աբրահամյանը մեղադրյալի աթոռին է արդեն 7 տարի: Պետությունը նաեւ Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան հայց է ներկայացրել՝ Աբրահամյանից եւ նրա հետ փոխկապակցված անձանցից պահանջում է հօգուտ Հայաստանի բռնագանձել ենթադրյալ ապօրինի ծագման գույք: Պատասխանողների թվում են անգամ նախկին վարչապետի վարորդը, թիկնապահը, որոնց անունով ձեւակերպված գույքը դատախազությունը համարում է, որ պատկանում է նախկին վարչապետին, ուստի պահանջում է պետությանը վերադարձնել 59 անշարժ գույք, որից 15-ը՝ Երեւանում: Բացի այդ, պահանջում են 20 ավտոմեքենա, 20 ընկերությունում մասնակցություններ եւ բաժնետոմսեր, ինչպես նաեւ՝ 55 միլիոն դոլար: Գործը քննվում է 2023 թվականից:

Անանա ՊԱՊԻԿՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՄԱՍՏԸ ՉԻ ՀԱՍԿԱՑԵԼ

Տարեմուտին պետական պաշտոնյաներին ճոխ պարգեւավճարներ բաժանելը վրդովեցրել է հասարակությանը: Հիշեցնենք, որ պետական բարձրաստիճան պաշտոնյաները 18-23 հազար դոլար են ստացել: ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախկին նախագահ Գագիկ Մինասյանին հարցրինք՝ իրենց ժամանակ նման շռայլ պարգեւավճարներ վճարո՞ւմ էին, արդյո՞ք գործող օրենքներին չի հակասում Փաշինյանի այս կամայական շռայլությունը:

Գագիկ Մինասյանն ասաց. «Ասեմ, որ Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը՝ իմ ոլորտը, ոչ թե ԱԺ ֆինանսների վերահսկողությունն ու ֆինանսների կազմակերպման մասին է եղել, այլ ուղղակի պետական բյուջեի հետ է կապված եղել: ԱԺ-ն մի հիմնարկ է, որն ունի ղեկավար, եւ ղեկավարն իր սկզբունքներով է գործում: Օրինակ՝ կրթության հանձնաժողովը նույնչափ ներգրավվածություն է ունեցել պարգեւավճարներին, որքան իմ ղեկավարած հանձնաժողովը: Ինչ վերաբերում է պետական հիմնարկներին այդքան մեծ գումարներ տրամադրելուն, ապա ես նման բան առաջին անգամ եմ տեսնում: Այո, բոլոր հիմնարկներում, այդ թվում՝ ԱԺ-ում, եղել է աշխատավարձային ֆոնդ, որը խրախուսումների հնարավորություն էր տալիս: Ստացվում է, որ ցանկացած հիմնարկ իր գործառույթներն իրականացնելու համար գումարներ էր նախատեսում, որպեսզի առավել աչքի ընկած աշխատակիցներին խրախուսում տրամադրեր: Այն չէր կարող լինել համատարած: Քանի որ այդտեղ կորում է «պարգեւավճար» հասկացության իմաստը: Եվ հետո՝ պարգեւավճարների այն չափերը, որոնց մասին խոսվում է այժմ, աբսուրդի ժանրից է: Դրանք չափազանց շատ են եւ անգամ խախտում են բարոյական նորմերը: Իշխանության ղեկավարը խոսում էր այն մասին, որ թոշակառուները 10 հազար դրամը ծախսելու տեղ չունեն, այն պարագայում, երբ ինքը միլիոններ է տրամադրում՝ իր իշխանությունն ամրապնդելու համար: Այլ կերպ բացատրել այդ ամենը՝ չենք կարող: Նա, փաստորեն, ընտրություններին ընդառաջ փորձում է այս ճանապարհով իշխանությունը պահել: Նա ահռելի գումարներ է տրամադրում ոստիկանությանը, ուժայիններին, հիմա արդեն՝ բոլոր պետական ծառայողներին: Նրա համար իր պետական ռեսուրսը չափազանց կարեւոր է, քանի որ այլ ռեսուրս չունի: Այս քայլով փորձում են մարդկանց մեջ մտցնել այն միտքը, որ եթե Փաշինյանը հեռանա, իրենք կկորցնեն պարգեւատրումները: Իսկ պարգեւատրումը լինում է կատարած աշխատանքի որակին համապատասխան: Այս քայլը համարում են անբարոյական: Թոշակառուն հաշվում է ամեն մի հազար դրամը, որպեսզի կարողանա իր կարիքները լուծել: Մարդիկ ապրել չեն կարողանում, չեն կարողանում կոմունալ վճարումները կատարել, ու այս ամենի ֆոնին այդքան պարգեւավճար ստանալ՝ ուղղակի անբարոյական քայլ է: Ինչ վերաբերում է պիլոտային ծրագրերին, ապա, հավանաբար, իշխանությունները դրա իմաստը լավ չեն հասկացել: Օրինակ, երբ ուզում ես երկրում խնդիր կարգավորել, որպեսզի կանոններն արագ բացահայտվեն եւ մեծ ավերածություններ չառաջացնեն, այն սկսում են փոքր քաղաքներից: Ենթադրենք՝ Լոռու մարզի մի քաղաքից, հետո անցնում են ամբողջ պետությանը»:

ԲՅՈՒՋԵ

ՔԱՂԱՔԱԿԱՆ «ՇԵՅՄԻՆԳԻՑ» ՎԱԽԵՑՈՂ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԿԱՐԾ ՍԿՍԵՑ ՉՎԱԽԵՆԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Անգամ պետական ծառայողներն են տարակուսած՝ ի՞նչ փոխվեց մեկ ամսում. Նիկոլ Փաշինյանը, որ պետական աշխատողների աշխատավարձերի բարձրացումը քաղաքական ամոթ էր համարում, միլիարդավոր դրամների պարգեւավճարների ֆոնդ է դուրս գրել պետական բյուջեից:

Դեռեւս անցած տարի՝ նոյեմբերի 22-ին, Համալիրում մոտ 8 հազար պետական աշխատողների մասնակցությամբ պետական ծառայողների առաջին համաժողովի իր ելույթում, ի պատասխան աշխատավարձերի վերաբերյալ հնչած դժգոհություններին, Նիկոլ Փաշինյանը բառացի հայտարարել էր. «Պիտի ուղիղ խոստովանեմ, որ պետական մարմիններում վարձատրության չափերի բարձրացման թեման քաղաքական խնդիր է, որն ունի երկու կողմ: Առաջին կողմն այն է, որ բոլորս հասկանում ենք պետական մարմինների մրցունակությունն աշխատանքի շուկայում բարձրացնելու անհրաժեշտությունը: Մյուս կողմից, քաղաքական իշխանությունը զգուշանում է պետական մարմիններում վարձատրության չափերը բարձրացնելու քայլից, նախեւառաջ՝ քաղաքական շեյմինգի, այսպիսի նոր տերմին կա, այսինքն՝ քաղաքական ամոթանքի վախից: Որովհետեւ նման դեպքերում հանրության առաջին ռեակցիան հետեւյալն է. երկրում այսքան սոցիալական խնդիր կա, դուք պետական մարմինների աշխատողների, այսինքն՝ պաշտոնյաների վարձատրությո՞ւնն եք բարձրացնում»:

Վարչապետի կայքում տեղադրված պաշտոնական այս ելույթից բառացիորեն մեկ-մեկուկես ամիս անց լրահոսն ալեկոծվեց միլիարդավոր պարգեւավճարների մասին լուրից: Պարգեւավճարներ էին ստացել թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր մարմիններում. պատգամավորները՝ 3-ական միլիոն դրամ միանվագ, իսկ նախարարները, վարչապետը եւ կառավարության մյուս անդամները՝ կրկնակի, եռակի ավելի: Մոտ 1.5 միլիոն դրամ աշխատավարձ ստացող Փաշինյանը, որ իրեն համարում էր Հայաստանի երեք միլիոն վարչապետերից մեկը, օրերս բացատրեց՝ ինչու են ինքն ու մյուս պաշտոնյաները արժանացել մի քանի միլիոնանոց պարգեւավճարներին: Պարզվում է՝ այսպես իրենք իրենց կոռուպցիոն գայթակղություններն են զսպում: «Հայաստանի ներդրումային միջավայրն էականորեն փոխվում է, ու ՀՀ մեծ ներդրումներ են հոսելու, եւ մեծ մրցակցություն է առաջանալու՝ ՀՀ-ում իրականացնելու ներդրումային ծրագրեր, եւ այս առումով մեր գնահատականն այն է, որ կոռուպցիոն ռիսկերն էականորեն կարող են մեծանալ, եւ մենք, այդ թվում՝ պետական պաշտոնյաներին ու պետական համակարգը պետք է կարողանանք պաշտպանել կոռուպցիոն ռիսկերից»,- հայտարարեց Փաշինյանը՝ հստակեցնելով, որ «Պետական որոշման շրջանակում ես ամսական, եթե չեմ սխալվում, 1.5 միլիոն դրամի չափով վարձատրության ավելացում եմ ունեցել»: Նկատենք, որ 8 տարում երկիր ներդրումներ չեն եկել, իսկ ՀԷՑ-ը սեփականատիրոջից խլելուց հետո փորձագետները կանխատեսում են, որ հետո էլ չի գալու: Ըստ ամենայնի, ներդրումներ ասելով՝ Փաշինյանը բացառապես Թրիփի կառուցումը նկատի ունի, որն ավելի շատ քաղաքական պրոյեկտ է, եւ իր բերած վնասները կարող են մի քանի անգամ գերազանցել ստացվող օգուտներին:

Նկատենք, որ ոչ միայն Փաշինյանը, այլեւ նրա ենթակա արդարադատության նախարարն էր իր ստացած 7 միլիոն դրամի պարգեւավճարը ներկայացնում իբրեւ աշխատավարձ՝ դժգոհելով պետական ապարատի «ոչ մրցունակ» ցածր աշխատավարձերից: Նոյեմբերի 22-ին Համալիրում պետծառայողների առջեւ իր սրտաճմլիկ ելույթից օրեր անց, սակայն, կառավարությունը շրջանառության մեջ է դրել միլիարդների հասնող պարգեւավճարների վերաբերյալ պիլոտային ծրագիր, եւ դեկտեմբերի կեսերին արդեն բյուջեից ահռելի գումարներ են դուրս գրել, ընդ որում՝ չհրապարակելով: Մինչդեռ պիլոտային ծրագրերը սովորաբար որոշակի ժամանակ են պահանջում, այսպես կոչված, փորձաշրջան, որի արդյունավետությունից կախված էլ պետք է որոշվի՝ այն շարունակություն կունենա՞, թե՞ ոչ: Այնինչ պետական ապարատի ողջ ղեկավար կազմը, հիմնականում՝ իշխանության աջակիցներ, ՔՊ-ականներ, տարեվերջին միանվագ խոշոր գումարներ են ստացել: Որ պարգեւավճարները տրվել են պիլոտային ծրագրով, խոստովանել է նաեւ Փաշինյանը՝ իր վերջին ճեպազրույցում: Նա հայտնել է, որ ներդրվում է ինստիտուցիոնալ նոր համակարգ, որն առաջին պիլոտային շրջանն անցնելուց հետո պետք է օրենսդրական ամրագրում ստանա: Այսինքն, դեռ օրինական չէ, օրենսդիր մարմնում չի հաստատվել, ինչը եւս օրենքի խախտում է:

Նրա խոսքով՝ այս համակարգը թույլ է տալու, որ պետական համակարգում աշխատողների նկատմամբ ցուցաբերվի անհատական վերաբերմունք, ինչպես նաեւ գերատեսչությունների ղեկավարները աշխատանքը եւ ժամանակն առավել արդյունավետ կառավարելու հնարավորություն ունենան՝ կարողանալով առավել արդյունավետ աշխատողներին պատշաճ ձեւով խրախուսել, իսկ պակաս արդյունավետ աշխատողներին չխրախուսել կամ խրախուսել իրենց աշխատանքին համապատասխան: Թեեւ, նկատենք, այս անգամ անխտիր բոլոր գերատեսչությունների ղեկավար կազմերն են ստացել՝ հայտնի չէ, թե ինչ արդյունք ապահովելու համար:

Իրականում պարզից էլ պարզ է, որ Փաշինյանն ուղղակի որոշել է պետական ծառայողներին կաշառել: Հավանաբար հույս ունի, որ առաջիկա համապետական ընտրություններում սրանք են լինելու իրեն քվե բերող հիմնական զանգվածը: Եվ դա անում է մեր՝ հարկատուներիս վճարած հարկերից գոյացած միջոցներից, ինչն օրենքով արգելված է եւ քրեորեն պատժելի արարք:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆՈՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՆԻԿՈԼԻ ՎԿԱ»

«Ականջալուր լինենք Սուրբ Պողոսի առաքելական զգուշացմանը. «Քրիստոնյա մի եղբայր իր հավատակից եղբորը դատի է քաշում, այն էլ՝ անհավատների առաջ: Բայց ձեզ համար արդեն իսկ հանցանք է միմյանց դեմ դատ ունենալը: Ավելի լավ կլիներ, որ հանձն առնեիք անիրավվել կամ զրկանք կրել»» (Ա Կորնթ. 6:6-7):

Արմավիրի մարզի դատարանի որոշմամբ՝ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը վերականգնվել է Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում: Նա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ հայց էր ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել թեմի առաջնորդի պաշտոնից իրեն ազատելու մասին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությունը եւ վերականգնել նույն պաշտոնում: Մինչ հայցն ամբողջությամբ քննելը, դատարանը բավարարել է միջանկյալ միջնորդությունը: Մինչդեռ հունվարի 10-ին Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ նա ազատվել էր թեմակալ առաջնորդի պաշտոնից, եւ նրա փոխարեն առաջնորդական տեղապահ էր նշանակվել տեր Ռուբեն վարդապետ Զարգարյանը: Անհասկանալի է, թե ինչպես է դատավորը որոշել, որ ինքը կարող է կաթողիկոսի նշանակած եւ հեռացրած հոգեւորականին հետոդորմյա անել իր պաշտոնում:

Հայտնի չէ՝ ինչ հագուստ էր կրում այդ պահին դատավորը, արդյոք նա հագե՞լ էր կաթողիկոսական ծիսական ամբողջական հանդերձանքը, երբ որոշում էր, որ Գեւորգ սրբազանը պետք է վերադառնա ու առաջնորդի թեմը, որից հեռացված է «կրոնական միապետի» կողմից, որն ունի նման հարցում միանձնյա, բարձրագույն իշխանություն: Բայց մի բան հայտնի է, որ այդ որոշումը կոնկրետ ուղղորդված էր կառավարության ղեկավարից, որը վաղուց է կրում թե՛ կաթողիկոսական սքեմ, թե՛ դատավորի մանտիա եւ թե՛ սրբի լուսապսակ՝ իր բազմադեմ երեւակայական կերպարներում:

Իսկ գուցե այդ դատավորն աթեի՞ստ է կամ որեւէ այլ կրոնի ներկայացուցիչ. նա իրավունք ունի՞ օրենքի անունից որոշումներ կայացնել այնտեղ, որտեղ որոշումներ կայացվում են բոլորովին այլ կարգով եւ այլ սկզբունքների ներքո: Օրինակ, ինչո՞ւ մեզ հայտնի չեն դեպքեր, երբ որեւէ այլ կրոնական «եղբայրությունում» պաշտոնների նշանակման եւ հեռացման հարցերը քննարկվեն դատարանում: Եվ, վերջապես, ինչպես դրան կնայեին եվրոպական կառույցները, որոնք թույլ չէին տալիս «Եհովայի վկաներին»՝ անգամ զինապարտներին տանել դատարան, երբ մարդիկ խուսափում էին զինվորական պարտադիր ծառայությունից՝ ասելով. «Ես Եհովայի վկա եմ», ստիպում էին ընդունել նոր օրենքներ եւ պարտադիր զինապարտությունը հարմարեցնել կրոնական կազմակերպության հավատամքին:

Դատարանի այս որոշմանը նախորդել էր Նիկոլ Փաշինյանի արձագանքը, թե «կաթողիկոսի կայացրած որոշումներն իրենց համար արժեք չունեն, եւ տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը շարունակում է մնալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մասյացոտնի թեմի առաջնորդ»: Նույնիսկ այդ հայտարարությունից հետո դժվար էր հավատալ, թե որեւէ հոգեւորական, թեկուզ արդեն «տիրադավ» բնութագրված, կարող է իրեն թույլ տալ դիմել դատարան՝ կաթողիկոսի այդ տնօրինությունն անվավեր ճանաչելու պահանջով: Ինչ է, չգիտի՞ սրբազանը, որ կաթողիկոսը, որը նստած է Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին, գավազանը ձեռքին, առաջնորդում է հավատացյալների կյանքն ու հոգեւոր ուղին, նվիրապետության շրջանակում կայացնում է որոշումներ, որոնք բողոքարկելի չեն աշխարհիկ օղակներում՝ դատարաններում, պետական այլ կառույցներում: Չէ՞ որ նա համբուրել է այն աջը, որն օրհնել է իրեն, որոշումներ կայացրել իր ծառայության վերաբերյալ, օրհնել է սուրբ Մյուռոնը... Հիմա, ինչ է, պատրաստ է համբուրել իր հայրապետի որոշումները բեկանող եւ նոր որոշումներ կարգող դատավորի ա՞ջը:

Անհնար էր թվում, թե որեւէ դատավոր այդ բողոքին ընթացք կտա, հայցը կընդունի վարույթ եւ կկայացնի նման որոշում: Արդեն պետք է զարմանալ, որ նա կարող է մեկնել իր աջն ու պահանջել, որ համբուրեն: Բայց գործ ունենք փաստի հետ. հերթական անգամ առնչվում ենք Սահմանադրությունը, օրենքները եւ պարզ մարդկային տրամաբանությունն ու բարոյականությունը չեղարկող իրավիճակի հետ եւ չգիտենք՝ սա զվարճալի՞ է, տխո՞ւր, թե՞ անհավանական:

Մասյացոտնի թեմի մի շարք հոգեւորականներ հայտարարություն են տարածել՝ իրենց զորակցությունը հայտնելով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին: Նրանք նշել են, որ ճանաչում են Տեր Ռուբեն վարդապետ Զարգարյանին՝ որպես Մասյացոտնի թեմի առաջնորդական տեղապահ: 22 հոգեւորական, գրեթե ամբողջ թեմը, ստորագրել է հայտարարությունը, ըստ որի՝ հոգեւոր խնամքին հանձնված եկեղեցական ծխերը լիակատար աջակցություն են հայտնում իրենց նորանշանակ առաջնորդին եւ պատրաստակամ են նրա հոգեւոր իշխանության ներքո՝ սիրով, համերաշխությամբ եւ ծառայական ոգով, շարունակելու իրենց սպասավորությունը հավատավոր ժողովրդի եւ Սուրբ եկեղեցու կյանքում: Հիմա սրան ի՞նչ պետք է պատասխանի դատավորը՝ հնարավո՞ր է արդյոք դատական կատարածուների միջոցով պարտադրել, որ այս հոգեւորականներն ընդունեն թեմի նախկին առաջնորդին եւ մերժեն նորին:

Եվ, վերջապես, ինչո՞ւ են այսպես մանրանում, եթե ամեն ինչ փոխվել է արդեն, եւ որոշումները կայացվում են ոչ թե Սահմանադրությամբ ու օրենքներով, այլ՝ աբսուրդի ժանրում, գուցե Փաշինյանը միանգամից հանձնարարի դատարանին՝ կաթողիկոսին հեռացնե՞լ «աշխատանքից»: Չէ՞ որ վարչապետի բանավոր որոշումը՝ կաթողիկոսին հեռացնելու մասին, արդեն կայացվել է, ուղղակի դեռեւս չի գտնվել այն կյանքի կոչելու եղանակը՝ բացի մի կուսակցության շրջանակում այն կրկնելու եւ կաթողիկոսի համար չաղոթելու հաստատված ծիսակարգից:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՏԱՎՈՒՇ

900 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԱՆՈՑ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ ԽԱՅՏԱՌԱԿ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատման, մայթերի եւ փողոցին կից շենքերի բակերի բարեկարգման, փողոցի ջրահեռացման եւ այլ աշխատանքների ծրագիրը Դիլիջանի համայնքապետարանը ներկայացնում է որպես արդյունավետ իրականացված, սակայն դրա ժամկետը, նախագծային աշխատանքները խախտվել են: Այդ ծրագիրը սուբվենցիոն է, արժեքի 60 տոկոսը ներդրել է համայնքը, 40 տոկոսը պետական բյուջեից է:

Նշված ծրագրի վերաբերյալ Հանրային հեռուստաընկերության 2025թ. հուլիսի 21-ի ռեպորտաժում ասվում է, որ ծրագրի արժեքը 894 միլիոն դրամ է, մեկնարկը տրվել է 2024-ին: Ծրագրի պայմանագիրը կնքվել է 2023թ. հուլիսի 10-ին: Աշխատանքներն իրականացնում է «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ն: Այդ ռեպորտաժում նշված է, որ աշխատանքները կավարտվեն 2025 թվականին: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը 2024 թվականի տարեկան հաշվետվության մեջ այդ ծրագիրը նշել է որպես իրականացված: 2026 թվականն է, փողոցի 2,4 կմ երկարությամբ ասֆալտապատման եւ այլ գործերը դեռ արված չեն, 2025-ի դեկտեմբերին ասֆալտի մի շերտն է միայն արվել, երկրորդ շերտը դեռ պետք է փռվի: Ծրագրով նախատեսված է անձրեւաջրերի՝ սելավաջրերի հեռացման համար խողովակների տեղադրում, հիդրոտեխնիկական կառույցների կառուցում: Նման աշխատանքների դեպքում ծրագիրը պետք է ընդգրկվեր ՀՀ կառավարության 2015թ.մարտի 19-ի N 596-Ն որոշման N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված օբյեկտների ցանկում, որոնք ենթակա են պետական համալիր փորձաքննության: Այդ ծրագիրը համապատասխանում է նշված որոշման մեջ առկա «Հասարակական, արդյունաբերական, ընդերքօգտագործման, գյուղատնտեսական եւ այլ արտադրական նշանակության. հիդրոտեխնիկական, կոմունալ, պահեստային, էներգետիկայի, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների» ցանկին: Այդ օբյեկտները համարվում են 4-րդ կարգի բարդության, դրանց նախագծերը կազմվում են նախագծողների խմբի, ոչ թե մեկ նախագծողի կողմից, 4-րդ կարգի օբյեկտների նախագծերը պետք է պարտադիր Քաղաքաշինության կոմիտեում համալիր փորձաքննության ենթարկվեն, սակայն Գետափնյա փողոցի ծրագիրը 4-րդ կարգի օբյեկտ չեն համարել, այն փորձաքննություն չի անցել: Ծրագրով կատարված գնումների գները մեծ չափով ուռճացված են, ձեռք են բերվել ավելի քան 150 հատ 1,5մ x 1,5մ չափերով բետոնյա դիտահորերի ծածկի չուգունե սալեր, յուրաքանչյուրը՝ 175 հազար դրամով: Շինարարական նյութերի գների ինտերնետային կայքերում նման չափի եւ տվյալների դիտահորի ծածկի գինը 104 հազար դրամ է, մեծաքանակ գնման դեպքում այդ գինը պետք է իջներ: Նախագծով սելավատար 6 մետր երկարությամբ, 300 միլիմետրանոց պոլիէթիլենային խողովակի գինը սահմանված է 14 հազար դրամ: Այն գնվել է 10 հազար 500 դրամով, մինչդեռ այդ խողովակի շուկայական գինը 8 հազար դրամ է, մեծաքանակ գնման դեպքում գինը կնվազեր: Ըստ նախագծի՝ սելավաջրերը, անձրեւաջրերը դեպի Աղստեւ գետ ուղղող 3 300 գծամետր խողովակ պետք է անցկացվեր, սակայն, ըստ աշխատանքների կատարողական ակտերի, տեղադրվել է 940 գծամետր խողովակ: Հունվարի 15-ին անցել եմ Գետափնյա փողոցի ամբողջ երկայնքով, տեսել, որ շինարարական աշխատանքներն արվել են նախագծին ոչ համապատասխան: Նախագծով նախատեսված է գետափնյա հենապատերի մաշված քարերի փոխարինում բազալտե քարերով, սակայն դրանց տեղում բետոն են արել, ինչը խաթարում է հենապատերի տեսքը:

Նախագծով նախատեսված է 2,4 կմ երկարությամբ, ամբողջական գծով ջրահեռացման խողովակների տեղադրում, սակայն այն արել են հատվածաբար, որի հետեւանքով ոչ թե նախագծով նախատեսված 2 տեղ են ծակել գետափնյա հենապատը, այլ՝ 10-ից ավելի տեղեր: Նախագծով նախատեսված է, որ այդ փողոցի մայթերի նոր տեղադրված սալիկների տակ պետք է բետոնապատվեր, սակայն դա չեն արել, ուստի որոշ ժամանակ հետո սալիկների տակ կանաչ է ծլելու, խարխլելու է սալիկները: Նախագծով նախատեսված է, որ ավելի քան 2 կմ փողոցի ամեն քառակուսի մետրում, ասֆալտապատումից առաջ 20 կգ ցեմենտ պետք է լցվեր, սակայն չի արվել: 2025-ի դեկտեմբերին են փողոցում փռել ասֆալտի առաջին շերտը, դեկտեմբերն ասֆալտապատման ճիշտ ժամանակը չէ: Ծրագրի արժեքն ուռճացված է, դրանում շատ աշխատանքներ որպես ձեռքի աշխատանք են ներկայացված: Նախագծով՝ փողոցի լուսավորության համար գետնի տակով լարեր պետք է անցկացվեին, 33 հենասյուն տեղադրեին, որոնց վրա տեղադրվեին լեդ լամպեր, սակայն դա էլ չի արվել: Գետափնյա փողոցի երկայնքով մեծ եղեւնիներ կային, դրանք հանել են: Նախագծով՝ փողոցի եզրին պետք է սիզամարգ ցանվեր, սակայն Դիլիջանի համայնքապետարանը փոքր տարածքի մասով միայն արել է դրա մի մասը, մնացածը՝ ոչ: Ծրագրի ամենասիրուն շենքերից մեկի՝ Գետափնյա 2 շենքի մոտ այժմ կիսաընկած էլեկտրական հենասյուն է առկա: Ծրագրի մեկնարկից մեկ ամիս առաջ պետք է դրա մանրամասների վերաբերյալ տեղեկատվական վահանակ տեղադրվեր, սակայն չի արվել:

Նյութերը՝
Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ԴՊՐՈՑԻ ՔԹԻ ՏԱԿ ՈՐՋ Է ՁԵՎԱՎՈՐՎԵԼ

Հունվարի լույս 15-ի գիշերը արտառոց դեպք է տեղի ունեցել Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքի Երիտասարդական փողոցի 5-րդ շենքի մոտ: Գիշերվա կեսին, ժամը 2-3-ի միջակայքում հինգհարկանի շենքի բնակիչները մեծ աղմուկի, շենքի աստիճաններով թափով իջնող քայլերի ձայներ են լսել: Բակ իջած երիտասարդները բացել են շենքի մոտ գտնվող գարաժներից մեկի դռները եւ այնտեղից ձեռքերի վրա լրիվ մերկ, անօգնական վիճակում դուրս բերել մի երիտասարդի, արագ նստեցրել են ավտոմեքենան եւ սլացել: Բնակիչներն ասում են, որ երիտասարդը գտնվել է վատ վիճակում, հավանական է՝ թմրանյութերի ազդեցության ներքո: Իջեւանի բժշկական կենտրոնից տեղեկացա, որ այդ գիշեր նման վիճակում իրենց հիվանդանոց որեւէ երիտասարդ չի տեղափոխվել:

Կատարվածն արտառոց է, սակայն այն նախապատմություն ունի: Սրանից մոտ մեկուկես ամիս առաջ այդ շենքի տարեց, վաստակաշատ մի քանի բնակիչներ զանգահարել էին ինձ եւ խնդրել էին այցելել իրենց բակ՝ տեսնելու այնտեղ տիրող վիճակը, որ ներկայացնեմ հանրությանը: Կենսաթոշակառուները հայտնեցին, որ բազմաբնակարան շենքի հարակից գարաժներում գիշերները երիտասարդները հավաքույթներ են կազմակերպում, որտեղ կասկածելի գործերով են զբաղվում: Բնակիչներն ասում էին՝ սովորաբար ավտոտնակներում կայանում են տվյալ շենքի բնակիչների մեքենաները, մարդիկ ձմեռվա պահուստ կարտոֆիլ, պահածոներ են այնտեղ պահում, սակայն իրենց շենքին հարակից ավտոտնակներում ավտոմեքենաներ չեն կայանում, բնակիչները ձմռան պաշարներ չեն պահում, այդ գարաժներում այլ նպատակներով են երիտասարդները հավաքվում: Եթե այդ ավտոտնակներում բնակիչների մեքենաները կայանեին, շենքի բակը մշտապես լցված չէր լինի ավտոմեքենաներով, որի հետեւանքով տաքսիները հաճախ չեն կարողանում մտնել շենքի բակ, ուղեւորներ վերցնել կամ իջեցնել: Ամառվա երեկոները եւ գիշերները գարաժներում եւ դրանց մոտակայքում հավաքված երիտասարդներն այնքան են աղմկում, որ խանգարում են բնակիչների գիշերային հանգիստը: Տարեց բնակիչներն ասացին, որ նրանց մեջ կան նաեւ անչափահասներ, որոնք երբեմն վիրավորական արտահայտություններ են թույլ տալիս տարեց մարդկանց հասցեին, սակայն անչափահասների ծնողները չեն սաստում նրանց: Տարեց մարդիկ այլ բողոքներ էլ ունեին՝ բարոյական հարթության մեջ: Շենքում թեթեւ վարքով աչքի ընկնող աղջիկներ կան, որոնց հաճախ կարելի է տեսնել շենքի մոտակա նստարաններին, տղաների հետ անպարկեշտ գրկախառնված: Իսկ Իջեւանի Երիտասարդական փողոցի 5-րդ շենքը գտնվում է 915 աշակերտ ունեցող Իջեւանի թիվ 5 հիմնական դպրոցի դիմաց, դպրոցականները տեսնում են շենքի մոտ կատարվող այս բացասական երեւույթները, այն, որ համակեցության ամենատարրական կանոններն են խախտվում: Բնակիչների պատմելով՝ անկարգ երիտասարդները միզում են շենքի պատերի տակ, եւ տարածքից գարշահոտ է փչում: Բնակիչներից մեկն այդ գարշահոտից ազատվելու համար հավաքարար է վարձել, շենքի պատերը լվացել են, որ ծանր հոտից ազատվեն: Ասում են նաեւ, որ շենքի պատերն անգամ խոնավացել, խարխլվել են՝ մեզից քայքայվել: Համայնքային ոստիկանության Իջեւանի բաժինը, տեղամասային տեսուչը քաղաքի Երիտասարդական փողոցի 5-րդ շենքի շուրջ տիրող անառողջ կացությունը, քրեածին իրավիճակը վերացնելու, այնտեղ կարգուկանոն հաստատելու աշխատանքներ պետք է կատարեն, որ նման երեւույթները կանխվեն, եւ ողբերգական զարգացումներ չլինեն:

Նորից լսումներ

«Հիմա 44-օրյա պատերազմի մասին զեկույցը կա՞, թե՞ չկա». ԱԺ հերթական նստաշրջանի մեկնարկին հարց բարձրացրեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը: Ինչո՞ւ քննիչ հանձնաժողովի զեկույցը չի ներկայացվում հանրությանը, փաստորեն, սա այս ԱԺ վերջին նստաշրջանն է: Մանուկյանը հետաքրքրվեց՝ այս նստաշրջանում արձանագրվելո՞ւ է, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցը չի հրապարակվելու: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ասաց, որ բոլոր պատգամավորները հնարավորություն ունեն ծանոթանալու զեկույցի հետ՝ բացառությամբ գաղտնի տեղեկություններին ծանոթանալու թույլտվություն չունեցողների: «Եթե քննիչ հանձնաժողովը ձեւավորվում է ու կազմում է զեկույց, այդ զեկույցը ներկայացվում է ԱԺ-ին... բայց մինչեւ հիմա այդ զեկույցը ներկայացված չէ ԱԺ-ին»,- պնդեց Մանուկյանը: Հայտնի է, որ բազմաչարչար զեկույցը ուշացնելու պատրվակով չհրապարակվեց, մինչդեռ կա տեղեկություն, որ քաղաքական որոշում է կայացվել՝ փակել այդ էջը, ինչպես Արցախի էջը, քանի որ նոնսենս կլիներ, եթե պարզվեր, որ Փաշինյանի թիմն ամեն ինչ արել է Արցախը չհանձնելու համար: Բայց, հավանաբար, նախընտրական փիառի թեմա են մտմտում, ուստի Փաշինյանի խոսափող Վահագն Ալեքսանյանը երեկ հանձնաժողովի ղեկավար Անդրանիկ Քոչարյանին առաջարկեց բաց մասի վերաբերյալ լսումներ կազմակերպել: Քոչարյանը, որ նախկինում կտրականապես դեմ էր լսումներին՝ ասելով, թե դա կնշանակի, որ զեկույց չկա, երեկ համաձայնեց քննարկել լսումների հարցը:

ՄԿԵՆՔՈՎԵՄ

ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԿԱ

Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում տեղի են ունենում բազմահազարանոց բողոքի ցույցեր՝ «Ձեռքներդ հեռու Գրենլանդիայից», «Յանկիներ, գնացեք տուն» կարգախոսներով: Գրենլանդիան երկրագնդի ամենամեծ կղզին է, գրեթե չբնակեցված: Դանիացիները տեղի բնիկներին տարբեր միջոցներով ցեղասպանության են ենթարկել, այն ունի կիսաինքնավար կարգավիճակ՝ Դանիայի կազմում, եւ հիմա ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մտադիր է այն բռնակցել ԱՄՆ-ին: ԱՄՆ պաշտոնյաների մեծ մասը կողմ է դրան, ինչը նշանակում է, որ Գրենլանդիայի բռնակցումը վերածվել է պետական քաղաքականության:

Գրենլանդիան պատված է սառույցով, բայց այդ սառույցի տակ հսկայական հանքահումքային հարստություններ կան, այն ունի ռազմավարական տեղադրություն՝ մոտ է Արկտիկային, որի հարստությունների վրա եւս ԱՄՆ-ն աչք ունի: Տիրանալով Գրենլանդիային՝ ԱՄՆ-ն մոտենում է Արկտիկային: Եվրոպացիներն ասում են, որ ամերիկացիների արածը դաշնակցին վայել չէ, իրենք նույն ռազմական բլոկում են՝ՆԱՏՕ-ի անդամ են, իրենք միավորվել են, որ արտաքին սպառնալիքից համատեղ պաշտպանվեն, ոչ թե իրարից տարածք խլեն: Մենք միշտ ենք ասել, որ պետությունների հարաբերություններում «դաշնակից» բառն օգտագործելը տեղին չէ, չկա այդպիսի հասկացություն՝ դաշնակից կամ ոչ դաշնակից, կա սյուզերեն եւ վասալ հարաբերություն: ԱՄՆ-ն եվրոպական երկրներին նայում է որպես իր վասալների, որոնց ինքը ժամանակին վերցրել է իր ենթակայության տակ՝ նրանց «ազատագրելով» ֆաշիստական Գերմանիայի ենթակայությունից: Բայց Դանիայի օրինակը ցույց է տալիս, որ երբ հարցը վերաբերում է տարածքին, հողին, վասալը կարող է ըմբոստանալ տիրոջ դեմ՝ համարելով, որ տերն այնքան էլ լավ կամ ճիշտ չի վարվում իր ծառաների հետ: Թե ինչով կավարտվի այս դիմակայությունը, դժվար չէ հասկանալ. եթե ամերիկացիները որոշեն գրավել կղզին, նրանց ո՛չ Դանիայում կազմակերպվող բողոքի ցույցերը կկանգնեցնեն, ո՛չ էլ մի քանի տասնյակ եվրոպացի զինվորականները, որոնք գնացել են այնտեղ՝ իբրեւ թե ամերիկացիներից Գրենլանդիան պաշտպանելու: Մի՞թե նրանք կկրակեն ամերիկացի զինվորականների վրա, եթե նրանք այնտեղ ափ իջնեն, իհարկե՝ ոչ, եւ դա ավելի մեծ խայտառակություն կլինի, քան եթե այնտեղ ընդհանրապես որեւէ զինվորական չլիներ: Գերմանացի զինվորականներն արդեն հեռացել են կղզուց՝ երեւի հասկանալով իրենց՝ այնտեղ գտնվելու անհեթեթության աստիճանը:

Հիմա՝ մեր մասին. ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը փաստացի գրավում է Հայաստանի մի մասը, այսպես կոչված՝ Թրամփի ուղի է գցում Հայաստանի տարածքով, որի երկարությունը հայտնի է՝46 կիլոմետր, բայց լայնությունն անհայտ է՝որքան ուզենան, այնքան էլ կլինի: Հայաստանի իշխանություն կոչվածը ոչ միայն դրան չի դիմադրում, այլեւ՝ ընդհակառակը, սեփական երկիրն օտարին հանձնելը ներկայացնում է որպես մեծ ձեռքբերում: Պատկերացնո՞ւմ եք՝ Դանիայի իշխանություններն ասեին՝ ի՞նչ վատ բան կա Գրենլանդիան ԱՄՆ-ին հանձնելու մեջ, այնտեղ միլիարդավոր դոլարների ներդրումներ կարվեն, աշխատատեղեր կստեղծվեն, այնտեղ ապրող Դանիայի քաղաքացիների բարեկեցությունը կբարձրանա, ԱՄՆ-ն պատրաստ է նույնիսկ մի քանի միլիարդ էլ Դանիային տալ՝ կբաժանենք ժողովրդին, բոլորը գոհ ու երջանիկ կլինեն. բա մեզ պե՞տք է հավերժական սառույցի մեջ թաղված այդ կղզին: Բայց դանիացիներն ատամ են ցույց տալիս իրենց դաշնակից տիրոջը՝ բողոքի ցույցեր են անում, նույնիսկ զինվորականներ են ուղարկում Գրենլանդիա՝ հասկացնելով, թե պատրաստ ենք զենքով պաշտպանել մեր ունեցածը:

Լավ՝ ՀՀ իշխանությունների պարագայում ամեն ինչ պարզ է. դրանք ապազգային են, ուլտրալիբերալ-արեւմտամետ- թուրքահպատակ, կապիտուլյանտ, հող հանձնող, հայրենիք վաճառող: Իսկ ընդդիմությո՞ւնը: Արարատ Միրզոյանն ԱՄՆ-ում փաստաթուղթ է ստորագրում՝ Հայաստանի տարածքն ԱՄՆ տնօրինմանը հանձնելու մասին, իսկ Հայաստանում՝ ոչ մի բողոքի գործողություն, ոչ մի ցույց: Խոսքը մի քանի գործիչների կողմից հնչեցված քննադատական հայտարարությունների մասին չէ, խոսքը քաղաքական ուժերի կողմից արտահայտված քաղաքական դիրքորոշման, նրանց կողմից կազմակերպված գործողությունների մասին է: Մի՞թե նույնը մենք իրավունք չունենք ասելու ամերիկացիների. «Ձեռքներդ հեռու Սյունիքից», «Ամերիկացիներ, տուն գնացեք»: Բայց մարդիկ, ովքեր պատրաստվում են վարչապետի պաշտոնում փոխարինել Նիկոլ Փաշինյանին եւ ուզում են լինել Հայաստանի ապագա վարչապետը, քար լռություն են պահպանում: Ինչպե՞ս կարելի է բողոքել ԱՄՆ-ի դեմ:

Ինչո՞ւ որեւէ ընդդիմադիր ուժ դրա մասին չի խոսում, որեւէ մեկը որեւէ գործողություն չի նախաձեռնում: Մի պարզ պատճառով. այդ քաղաքական ուժերը, դրանց ներկայացուցիչները չեն ուզում հարաբերություններ փչացնել ԱՄՆ-ի, ԱՄՆ իշխանությունների հետ: Նրանց թվում է, որ եթե իրենք բողոքեն ԱՄՆ կողմից իրականացվող քաղաքականության դեմ, դրանով ավելի կամրապնդեն Փաշինյանի դիրքերը, ԱՄՆ իշխանություններն ավելի կմեծացնեն նրա իշխանությանը ցուցաբերվող աջակցությունը, կօգնեն, որ նա մնա իշխանության, որ իրականացնի ստորագրված համաձայնագրերը: Նրանից մեծ մասը համոզված է, որ Հայաստանի տերն ԱՄՆ-ն է, նաեւ՝ իշխանության իմաստով, եւ եթե իրենք ըմբոստանան տիրոջ դեմ, ապա երբեք հնարավորություն չեն ունենա իշխանության գալու, նույնիսկ՝ ընդդիմություն լինելու: Դրա համար ավելի անշառ թեմաների մասին են խոսում՝ պարգեւավճարներ, բյուջեի ոչ արդյունավետ կառավարում եւ այլն:



Մենք Նիկոլ Փաշինյանի իշխանությունից չենք ազատագրվի, սեփական իշխանություն ձեւավորելու հնարավորություն չենք ունենա, քանի դեռ Հայաստանը չի ազատագրվել ամերիկյան տիրապետությունից: Իսկ դրա համար պետք է, որ մարդիկ, առաջին հերթին՝ իրենց քաղաքական գործիչ համարողներն ազատագրվեն ամերիկյան հոգեւոր կամ գուցե մտավոր տիրապետությունից:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԾԻԾԱՂԵՔ, ԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԴԵՆ ՈՒՇ Է

Հինացի գրող Շը Ճըցունի խոսքերով, շատերը կարծում են, որ ուրախությունն ու ծիծաղը փոխկապակցված են: Սա նշանակում է, որ եթե սրտումդ ուրախություն է, ապա դեմքդ անպայման ծիծաղում է: Բայց արդյո՞ք ծիծաղն ուրախության բավարար արտահայտումն է, մի՞թե պարտադիր է ծիծաղել, երբ ուրախ ես: Իրականում, անուրախ ծիծաղը մեր օրերում ավելի շատ է պատահում, քան ուրախությունը՝ առանց ծիծաղի:

Ուզում եմ այս իմաստուն բառերով հիմնավորել, թե ինչու ենք այսօր ծիծաղում այն իրավիճակի վրա, որում հայտնվել ենք ազգովի՝ գիտակցաբար, իսկ անհատապես՝ ակամա: Համաձայնեք, որ այսօր լուրերին հետեւել ու զսպել ծիծաղը՝ ուղղակի շատ դժվար է: Ընդ որում, այն, ինչի վրա հիմա ծիծաղում ենք, նախ եղել է շատ տխուր, առաջացրել է լաց ու անելանելիության զգացում, ապա աբսուրդը զարգացել է՝ մեզ անընդհատ զարմացնելու ճանապարհով, հետո եկել է զզվանքի զգացումը, իսկ հիմա զարմանալն է դժվար, լացելը՝ ուշ, իսկ չծիծաղելը՝ այլեւս անհնար: Ընդ որում, կարելի է ծիծաղել զզվանքին զուգընթաց: Եթե նայելով «չաղոթքի» պատարագների կադրերը, տեսնելով խորանի առջեւ լուրջ դեմքով չոքած պաշտոնյաներին, դեռեւս ծիծաղելու ցանկություն չենք ունենում, ուրեմն դեռ լացի, զզվանքի կամ զարմանքի էտապում եք, ծիծաղին ուղղակի դեռ չեք հասել, բայց անխուսափելիորեն գալու է նաեւ այդ պահը:

Արդյոք ծիծաղելի չէ՞ լսել, թե ինչպես է մեկը դիմում Աստծուն՝ ասելով. «Ներիր, որ քեզ մենակ եմ թողել»: Ո՞վ ես դու, որ մենակ թողնես Աստծուն եւ կամ ընկերակցես ու պաշտպանես նրան: Ծիծաղելի չէ՞ արդյոք այդ միտքը՝ իր ողջ ամբարտավանությամբ հանդերձ: Իսկ երբ մեկն ասում է. «Ես եկել եմ պատարագի ոչ թե վարչապետի, այլ Աստծո կանչով», կարելի է զարմանալ այդ անվախ ու անվերապահ լկտիության վրա, բայց կարելի է նաեւ ծիծաղով պատասխանել. «Հանգիստ գնացեք ձեր գործին, Աստված մեզ ասաց, որ ձեզ չի կանչել»: Եթե սա այս ցավոտ ու տխուր իրավիճակում ծիծաղելի չէ, ուրեմն ծիծաղելի չէ նաեւ այս անեկդոտը.

Հոգեբուժարանում մի հիվանդ բարձր գոռում է.

- Ես Նապոլեոնն եմ:

Մյուսը հարցնում է.

- Ինչ իմացար:

Նապոլեոնը, թե՝ Աստված ասաց ինձ:

Բայց հենց այդ պահին մի ձայն մյուս սենյակից բղավում է.

- Չէ, ես նման բան չեմ ասել:

Սովետական ԿԳԲ-ի հայերեն փաստաթուղթը (Եզրաս արքեպիսկոպոսի վերաբերյալ) նույն կարգի ծիծաղ առաջացրեց բոլոր նրանց մոտ, ովքեր սովետի ժամանակ գոնե ժէկի թուղթ են տեսել ու գիտեն, որ այն երկլեզու էր, իսկ խորհրդային ԿԳԲ-ի թղթաբանությունը՝ անգամ երկլեզու չի էլ եղել, այլ միայն՝ ռուսերեն: Եվ ինչպես չծիծաղես, երբ խորհրդային պետության կարգերից նվազագույն պատկերացում չունեցող երիտասարդ պաշտոնյաները ցնծությամբ հայտարարում են իրենց ահավոր շոկի մասին, երբ տեղեկացել են այդ փաստաթղթի մասին: Ցանկություն է առաջանում հանել նրանց այդ շոկից, նախ ասել՝ «հանգիստ եղեք, այդպիսի թուղթ երեւի ձեր պապիկն էլ կունենա, եթե իմ պապիկի նման չի հալածվել խորհրդային պետության կողմից, բայց իրենից մի ինչ-որ բան ներկայացնող մարդ է եղել»: Եվ վերջապես՝ չկա այդ պետությունը, փլուզվել, վերացել է, բայց Հայաստանն էլ այսօր ունի Ազգային անվտանգություն, ու, վստահաբար, այնտեղ կան գրանցված մարդիկ, ովքեր այսօր ապահովում են ձեր իշխանությունը, եւ հուսանք, որ մի օր նրանց անունները կիմանանք ու էլի կծիծաղենք ու էլի՝ առանց որեւէ շոկի:

Կարելի է թվարկել անթիվ-անհամար հատարարություններ, մտքի հակասություններ, ելույթներ, գործողություններ, որոնք առաջացնում են տխրությունը հաղթահարած ծիծաղ՝ աբսուրդի թատրոնի հանդիսատեսին թույլ չտալով ձանձրանալ: Ի դեպ, այս իրավիճակում ծիծաղը ոչ միայն էմոցիա է, այլ նաեւ զենք, երբ լրջորեն քեզ խաբում են, անամոթաբար ստում ու կարծում, թե կհավատաս, պետք է ուղղակի ծիծաղել՝ այդ իրավիճակում հաղթելու համար: Ուրեմն առաջարկում եմ ընդդիմությանն ու բանական ընտրողներին՝ հաճախ ծիծաղել, ցանկացած դեպքում ծիծաղել, ոչ թե զարմանալ կամ լրջորեն հակադարձել, այլ բացահայտ ծիծաղել ու ցույց տալ, որ այս անհեթեթ գործողությունների ու անլուրջ հայտարարությունների բուն նպատակը, իմաստն ու բովանդակությունը մեզ լիովին հասկանալի են, եւ դրանց մենք այլեւս լուրջ չենք արձագանքում:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՄՈԼԴՈՎԱ

ՆԱԽԱԳԱՀԸ ԿՈՂՄ Է ՍԵՓԱԿԱՆ ԵՐԿԻՐԸ «ԼՈՒԾԱՐԵԼՈՒՆ». ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՄԵԾ ՍԿԱՆԴԱԼ Է

Եվրոպայի եւ, առհասարակ, գլոբալ աշխարհաքաղաքական «երկնքում» անսպասելի «ամպրոպի» պես հնչեցին Մոլդովայի նախագահ Մայա Սանդուի խոսքերը: Օրերս նա աջակցեց հանրաքվե անցկացնելու եւ Ռումինիայի հետ իր երկրի միավորման գաղափարին: Ընդդիմության ներկայացուցիչները շտապեցին հայտարարել, որ նա հրաժարվում է այն պետությունից, որը, ըստ օրենքի, պարտավոր է պաշտպանել: Եվ այսպես, Մոլդովայի նախագահ Մայա Սանդուն հայտարարել է, որ աջակցում է երկրի միավորմանը Ռումինիայի հետ: Նա ասել է, որ եթե այդ հարցով հանրաքվե անցկացվի, ինքն «այո» կքվեարկի: «Նայեք, թե ինչ է կատարվում Մոլդովայի շուրջ եւ աշխարհում այսօր: Փոքր երկրի համար դժվար է գոյատեւել որպես ժողովրդավարական եւ ինքնիշխան պետություն»,- բացատրել է նա:

Սանդուն, սակայն, ընդունել է, որ մոլդովացիների մեծամասնությունը դեմ է այդ գաղափարին, այդ իսկ պատճառով Քիշնեւը կենտրոնացած է Եվրամիությանը միանալու վրա: «Հարցումների հիման վրա ես հասկանում եմ, որ ներկայում բնակչության մեծամասնությունը չի աջակցի միավորմանը: Այնուամենայնիվ, շատերն աջակցում են ԵՄ-ին միանալուն: Այս նպատակը լիովին իրատեսական է»,- ընդգծել է նա: Մոլդովայի ընդդիմությունը նշել է, որ Սանդուն խախտում է երկրի սահմանադրությունը, եւ որ նախագահը պարտավոր է պաշտպանել պետության ինքնիշխանությունը, այլ ոչ թե վերացնել այն: Փաստաթղթում նաեւ ընդգծվում է Մոլդովայի չեզոք կարգավիճակը, իսկ Սանդուն պատրաստ է հրաժարվել դրանից՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալու օգտին: Ավելին, 2023 թվականին երկիրն ընդունեց անջատողականության մասին օրենք: Այն սահմանում է, որ Մոլդովայի անվտանգությանը սպառնալիք ստեղծելը նախատեսում է մինչեւ 20 տարի, իսկ պետության դեմ դավադրությունը՝ մինչեւ 7 տարի ազատազրկում: Իշխող կուսակցությունն այն ժամանակ բացատրեց, որ օրենքն անհրաժեշտ էր Ուկրաինայում հակամարտության եւ Ռուսաստանի կողմից ենթադրյալ սպառնալիքների պատճառով:

Ընդդիմությունը պնդում է, որ Սանդուն պետք է այժմ հետապնդման ենթարկվի այս հոդվածներով: Նախկին նախագահ Իգոր Դոդոնը բացատրել է, որ Մայա Սանդուն ցանկանում է պատմության մեջ մտնել որպես անկախ Մոլդովայի վերջին նախագահը եւ ձգտում է ղեկավարել միասնական պետությունը: «Նա կքվեարկի երկու երկրների միավորման օգտին ոչ թե իդեալի համար, այլ իր նկատմամբ եսասիրությունից դրդված եւ սեփական ապագան հաշվի առնելով»,- ընդգծել է նա: Սոցիալիստական կուսակցությունը հատուկ հայտարարություն է տարածել, որում հայտարարում է, որ Սանդուն կատարել է քաղաքական դավաճանություն:

«Մենք պահանջում ենք, որ գլխավոր դատախազությունը, հետախուզության եւ անվտանգության ծառայությունը եւ բոլոր իրավասու մարմիններն անհապաղ սկսեն հնարավոր դավաճանության մասով հետաքննություն»,- ասվում է հայտարարության մեջ: Խորհրդարանի նախկին անդամ Մարինա Տաուբերը քննադատել է Սանդուի այն միտքը, թե «դժվար է փոքր երկրի համար»: «Սա իշխող կուսակցության եւ նրա տնտեսական կառավարման ձախողման ուղղակի խոստովանություն է: Այս բոլոր տարիների ընթացքում Մայա Սանդուն իշխանության է եկել «ուժեղ Մոլդովա» կարգախոսով»: Այսօր նա փաստացի խոստովանում է, որ չի հավատացել իր ղեկավարած երկրին եւ նույնիսկ մտադիր չի եղել այն զարգացնել»,- բացատրել է նա: Մոլդովացի կոմունիստները նույնպես կոչ են արել դատապարտել ազգային դավաճանությունը: «Նման իրավիճակ անհնար է պատկերացնել որեւէ այլ երկրում: Պետությունները պայքարում են իրենց ինքնիշխանության համար, ամրապնդում այն եւ իրենց քաղաքացիների մեջ սերմանում հպարտության զգացում սեփական երկրի նկատմամբ: Եվ միայն Մոլդովայում են իշխանության եկածները կեղծիքի, խաբեության եւ ընտրողներին կաշառելու միջոցով կոչ անում դրա վերացմանը»,- ընդգծում է Կոմկուսը՝ հայտարարության մեջ:

Ի դեպ, առաջին անգամ չէ, որ Սանդուն խոսում է Ռումինիայի հետ միավորման մասին: 2021 թվականին նա արդեն հայտարարել էր հանրաքվե անցկացնելու իր պատրաստակամության մասին: «Շատերը կողմ են այս նախաձեռնությանը, բայց կա նաեւ հասարակության մեկ այլ մաս, որը վախեցած է միավորման գաղափարից: Նման մեծ նախագիծը կարող է իրականացվել միայն ճնշող մեծամասնության աջակցությամբ: Կտեսնենք, թե ինչպես կզարգանան իրադարձությունները»,- պնդել էր նա այն ժամանակ:

Հարցումները ցույց են տալիս, որ մոլդովացիների միայն 20-30%-ն է կողմ Ռումինիայի հետ միավորմանը: Այս գաղափարի կողմնակիցները բացատրում են, որ հիասթափված են մոլդովական քաղաքական էլիտայից եւ նաեւ ընկճված են տնտեսական դժվարություններից: Իսկ մոլդովացիների 50-60%-ը դեմ է միավորմանը: Մոլդովայի հետ միավորումն ակտիվորեն քննարկվում է նաեւ Ռումինիայում: 2024 թվականի մարտին վարչապետ Մարսել Չոլակուն հայտարարեց, որ Մոլդովայում «միայն ռումինացիներ» են ապրում: «Մոլդովացիներ չկան, մոլդովական լեզու չկա, դա ռումիներենն է, եւ սրանք ռումինացիներ են»,- ասել էր նա:

Անցյալ տարվա հունիսին, Քիշնեւ կատարած այցի ժամանակ, Ռումինիայի նախագահ Նիկուսոր Դանը հայտարարեց՝ երբ մոլդովացիների մեծամասնությունը քվեարկի միավորման օգտին, «Ռումինիան պատրաստ կլինի դրան»: Մինչ քաղաքական միավորման թեման դեռեւս նոր է քննարկվում, երկրի ինտեգրացիան բավականին ակտիվորեն ընթանում է այլ ոլորտներում: 2023 թվականին Մոլդովան իր գազամատակարարման համակարգը փոխանցեց ռումինական ընկերությանը: Անցյալ տարի Քիշնեւը սկսեց էլեկտրաէներգիա գնել իր հարեւանից, պաշտոնյաները հայտարարեցին, որ երկու երկրների էներգետիկ համակարգերը կմիավորվեն մինչեւ 2029 թվականը: 2023 թվականին Մոլդովայի խորհրդարանը նույնպես հաստատեց մոլդովական լեզվի վերանվանումը ռումիներենի, եւ դպրոցներում սկսեցին դասավանդել «Ռումինացիների պատմություն» առարկան: Տեղեկատվական տարածքն ակտիվորեն վերաձեւավորվում է. ռուսական եւ ռուսամետ լրատվամիջոցները դուրս են մղվում, իսկ Բուխարեստում գործող լրատվամիջոցներն ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում: Մոլդովայի եւ Ռումինիայի զինված ուժերը պարբերաբար համատեղ զորավարժություններ են անցկացնում:

Մոլդովացի քաղաքագետ Ալեքսանդրու Կորինենկոն կարծում է, որ ցանկացած այլ երկրում նման կուրս վերցրած նախագահն արդեն իսկ կկանգներ իմպիչմենտի գործընթացի առջեւ, բայց ոչ՝ Մոլդովայում: «Անհեթեթություն է, երբ Սահմանադրության երաշխավորը կոչ է անում լուծարել սեփական պետությունը: Սակայն մեր դեպքում Սանդուի համար հետեւանքներ չեն լինի: Մոլդովայում կան մի շարք միութենական քաղաքական գործիչներ եւ կուսակցություններ, որոնք ուղղակիորեն կոչ են անում երկու երկրների միավորմանը, եւ իրավապահ մարմինները որեւէ հարց չեն բարձրացրել նրանց վերաբերյալ: Ցավոք, հասարակությունը նույնպես չի արձագանքում: Մարդիկ զբաղված են իրենց գոյատեւմամբ, հիասթափված են ընդդիմությունից եւ, ընդհանրապես, քաղաքականությունից, ուստի նախընտրում են անտեսել ամեն ինչ»,- բացատրում է նա:

Մեկ այլ մոլդովացի քաղաքագետ՝ Կոռնելիու Չիուրեան նշում է, որ երկու երկրների միավորումը մոտ ապագայում սպասելի չէ: «Կարծում եմ, որ դա ինքնաբուխ հայտարարություն էր, որը Մայա Սանդուի համար լուրջ քաղաքական սխալ դարձավ: Այժմ մոլդովացիների մեծամասնությունը դեմ է միավորմանը: Հարկ է նշել Մերձդնեստրը եւ Գագաուզիան, որոնք միանշանակ դեմ են: Այս գաղափարը նաեւ ոգեւորություն չի առաջացնում Եվրամիությունում, որը պետք է կրի Մոլդովայի բեռը, եթե միավորումը տեղի ունենա: Իսկ Ռումինիան չի պարտադրում, քանի որ հասկանում է, որ միավորումը էժան բան չի լինի»,- նշում է նա: Եվրոպայում երկու երկրների միավորման եւ պառակտումների պրակտիկան նոր չէ. հիշենք երկու Գերմանիաների՝ դեմոկրատական եւ դաշնային հանրապետությունների վերամիավորումը, Չեխոսլովակիայի տարանջատումը Չեխիայի եւ Սլովակիայի, Հարավսլավիայի մասնատումը եւ այլն, բայց որ աշխարհում տարբեր ժողովուրդներ պայքարում են ինքնիշխանության համար, փաստ է, եւ Մոլդովայի օրինակն այս առումով խիստ տարակուսելի է եւ մեր՝ հայերիս համար՝ նաեւ ուսանելի...

Արա ԱԼՈՅԱՆ

ԻՆՉՊԵՍ Է ԵՎՐՈՊԱՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՊԱՏԺԵԼ ԹՐԱՄՓԻՆ



Եվրոպական Միությունը պատրաստվում է վճռական հակազդող միջոցներ կիրառել Միացյալ Նահանգների դեմ, որպեսզի հետ պահի ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին՝ Գրենլանդիայի նկատմամբ վերահսկողություն սահմանելու մտադրությունից: Այդ հակազդման միջոցները ներառում են նաեւ 93 միլիարդ եվրոյի չափով ամերիկյան ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ մաքսատուրքերի սահմանում: Այս մասին գրում է Politico պարբերականը:

Համաձայն հոդվածի՝ Թրամփի նվաճողական նկրտումներին հակազդելու հարցը քննարկվել է նախօրեին՝ Բրյուսելում կայացած ԵՄ ներկայացուցիչների խորհրդակցության ժամանակ:

Հոդվածում նշվում է, որ քննարկումները տեւել են երեք ժամ: Եվ այդ ընթացքում եվրոպացի դիվանագետներն ընդգծել են, որ կարեւոր է կոնկրետ միջոցառումների եւ քայլերի մշակումը՝ Սպիտակ տանը հակազդելու համար, այն դեպքում, եթե Վաշինգտոնում առաջիկայում կայանալիք բանակցությունները չբերեն խնդրի արագ կարգավորման: Նշվում է նաեւ, որ այս հանդիպումից հետո ԵՄ խորհրդի ղեկավար Անտոնիու Կոշտան մտադիր է հավաքել գագաթնաժողով՝ ԵՄ առաջնորդների մասնակցությամբ: Այն կկայանա արդեն այս շաբաթ: Politico-ն նշում է, որ եվրոպական կողմը բավականին վճռական է տրամադրված եւ հակաամերիկյան 93 միլիարդանոց մաքսատուրքերը կարող են սահմանվել շատ արագ: Բացի այդ, Եվրամիությունը կարող է սահմանափակել ամերիկյան բանկերի գործունեությունը՝ կիրառելով, այսպես կոչված, հակահարկադրանքի գործիքը: Նույն գործիքի օգնությամբ՝ Բրյուսելը կարող է չեղարկել պատենտները կամ էլ խոչընդոտել ընկերություններին՝ ծրագրային ապահովման թարմացումներից կամ հուսքային փոխանցումներից եկամուտներ ստանալ: Եվրոպական կառավարությունները, սակայն, դեռեւս չեն դիմել Եվրահանձնաժողովին եւ չեն խնդրել, որ այդ գործիքը կիրառվի: Հոդվածում ասվում է, որ Եվրոպան բավարար տարբերակներ ունի իր «զինանոցում», եւ դրանք ներառում են թե դիվանագիտական, թե տնտեսական գործիքներ, որոնցով ԵՄ-ն կարող է հակազդել Միացյալ Նահանգներին: Ընդ որում, որոշ միջոցների մասին կարելի է խոսել բարձրաձայն, մյուսների մասին՝ ոչ: Կպահանջվի երկու կամ երեք օր, որպեսզի ԵՄ-ն հստակեցնի իր անելիքները, ամփոփում է Politico-ն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ջուրը մանկապարտեզ է լցվում, իսկ բյուջեն մսխել են պարգեւատրումների վրա

Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը 2025թ. դեկտեմբերի 26-ին ընդունել է «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին» որոշում: Համաձայն այդ որոշման՝ Դիլիջան համայնքի «Դիլիջանի քաղաքապետարանի» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի աշխատողների աշխատավարձեր եւ հավելավճարների տնտեսագիտական հոդվածից 8 միլիոն դրամ տեղափոխել է պարգեւատրումների, դրամական խրախուսումների եւ հատուկ վճարների տնտեսագիտական հոդվածի տակ: Համայնքապետը դա արել է, որպեսզի համայնքի բյուջեից կարողանա տոնական պարգեւավճարներ վճարել համայնքապետարանի պաշտոնյաներին: Մինչդեռ այդ գումարով Դիլիջանում օրախնդիր հարցեր կարող էին լուծվել:

Դիլիջանի բնակչուհի Աքսաննա Բաղմանյանը պատմում է Դիլիջան քաղաքի թիվ 4 մանկապարտեզի ողբալի վիճակի մասին. «Թիվ 4 մանկապարտեզի վիճակը անձրեւների ժամանակ ուղղակի մտահոգիչ է: Ամեն տեղ ջուր է կուտակվում, ամբողջ դահլիճը լցվում է ջրով, իսկ դա արդեն լուրջ վտանգ է երեխաների համար: Դաստիարակներն ու դայակները բառացիորեն ամեն պահ երեխաների կողքին են՝ վախենալով, որ ցանկացած պահի կարող է ինչ-որ բան փլուզվել կամ վնաս հասցնել: Ցավալի է, որ այսքան վտանգավոր պայմաններում երեխաները ստիպված են օրեր անցկացնել, եւ առավել ցավալին, որ նման իրավիճակները միայն Դիլիջանում չեն: Մանկապարտեզը պետք է լինի անվտանգ, ջերմ ու պաշտպանված վայր, ոչ թե վտանգի աղբյուր: Հուսանք, որ պատասխանատու մարմինները կարձագանքեն եւ անհրաժեշտ քայլեր կձեռնարկեն՝ երեխաների անվտանգությունն առաջնային համարելով»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՎԱԽԿՈՏՆԵ՛Ր, ԴՈՒՔ ԵՐԲԵՔ ԷԼ ԱՐԺԱՆԻ ՉԵՔ ԵՂԵԼ ՁԵՐ ԿՈՉՄԱՆԸ

Վերջին շրջանում Նիկոլ Փաշինյանի ներքաղաքական հիմնական «զբաղմունքը» դարձել է Եկեղեցու դեմ պայքարը, որի վրա ծախսում է ահռելի ժամանակ ու պետական ռեսուրսներ: Ընդ որում, ակնհայտորեն, հասարակությունը նրան այդ հարցում չի պաշտպանում. վարչական տեռորով ու պարտադրանքով հազիվ մի քանի տասնյակ մարդ են կարողանում տանել իրենց կեղծ «պատարագներին», բայց խառնակչություն է գցել երկրով մեկ, հոգեւորականներ է հանել Վեհափառի դեմ եւ այլն: Այս եւ այլ հարցերի շուրջ զրուցեցինք թոշակառու ուսուցչուհի **Հասմիկ Հարությունյանի** հետ:

- Նիկոլ Փաշինյանի հույսը շարունակում է մնալ հայտնի տիրադավների խումբը եւ նրանց միացած տասնյակ հոգեւոր հովիվները, որոնց տարբեր տեղեր են «գործուղում», որպեսզի պատարագներում զեղչեն Վեհափառի անունը, նրան անվանարկեն, եւ նրանց միջոցով հասնի Եկեղեցու տապալմանն ու սեփական աղանդի կյանքի կոչմանը: Ձեր կարծիքով, կհաջողվի՞ Փաշինյանին՝ հեռացնել Վեհափառին կաթողիկոսի գահից:

- Հայ առաքելական եկեղեցին աշխարհում հնագույններից է, եթե ոչ հնագույնը: Գոյության բազում դարերի ընթացքում այն վերածվել է համաշխարհային նշանակության հոյակերտ կոթողի, որովհետեւ շատ քիչ փոփոխության է ենթարկվել, պահպանել է իր նախաստեղծ, քրիստոնեական սկզբունքներին ավելի մոտիկ, ավելի մաքուր, օտար ազդեցություններից զերծ վիճակը: Վերջին ժամանակներում գլոբալիզացիայի արշավանքները մարդկության ստեղծած արժեքային համակարգի դեմ դարձան ավելի ագրեսիվ, թափ հավաքեցին: Վկա՝ համաշխարհային վերջին իրադարձությունները: Ի դժբախտություն մեզ, մենք՝ որպես ավանդապահ երկիր, շա՜տ էինք խանգարում, ՀԱԵ-ն՝ հատկապես: Երկրի բոլոր կարեւոր ոլորտները հիմնահատակ քանդելուց հետո միակ անսասանը ՀԱԵ-ն է՝ ուժեղ, ամուր, հավատարիմ, փորձառու եւ հաստատուն: Այդ է պատճառը, որ Նիկոլը (իմա՝ իր տերերը) բոլոր ռեսուրսներն ուղղել է Եկեղեցին քանդելուն՝ բացահայտ, առանց քաշվելու խախտելով օրենքները, Սահմանադրությունը, զարգացնելով Արութին Զիմզիմովի՝ «խղճիս դավթարը վու՞րն է» միտքը (կարծում եմ՝ «Պեպո»-ն կարդացել է, Զիմզիմովն էլ իր իդեալն է): ՀԱԵ-ն կարծր է, եւ նրա արդեն քայքայված ատամները կփշրվեն: Բոլորը հասկանում են՝ արշավը Վեհափառի դեմ չէ, այլ մեր հավատի, մեր արմատների, մեր սրբությունների դեմ է: Չեն հաջողելու, Եկեղեցին է եղել մեր միասնության խորհրդանիշը եւ շարունակում է լինել:

- Փաշինյանը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին «բարենորոգում» է այն եպիսկոպոսներով, որոնց անունները պարբերաբար հայտնվում էին մամուլի ուշադրության կենտրոնում՝ բացասական իմաստներով: Ի՞նչ բնութագիր կտաք նրանց, ովքեր դրժել են իրենց ուխտը եւ միացել եկեղեցաքանդ գործին:

- Ամեն օր հայ եկեղեցու հետ ընդհանրապես կապ չունեցող մարդկանցից երբեմն-երբեմն բարձրագոչ, «սրտացավ» աղաղակներ են լսվում՝ Հայ եկեղեցին «բարենորոգելու» անհրաժեշտության մասին (ճի՜շտ եք ասում, ե՞րբ գլխի ընկաք, թե՞ գլխի գցեցին): Երբ հետեւում եմ վաղուց սկսված այս ազգադավ շարժմանը, պարզ երեւում է, որ բոլոր քայլերը, արտահայտությունները մանրամասն մշակված են եւ կապ չունեն այս աստվածամերժ ամբոխի հետ: Սրանք թութակի պես կրկնում են իրենց տրված տեքստերը՝ չհասկանալով, որ ՀԱ եկեղեցին չունի՛ բովանդակային բարենորոգման կարիք: Եկեղեցու բարենորոգմամբ իբր մտահոգ տիրադավները սկզբում այդ մասին չէին էլ գլխի ընկել, միայն պատարագների ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսի անունը չհնչեցնելն էր գերագույն նպատակը, հետո գլխի գցեցին, եւ սրբազանների միանալով՝ նպատակն «ազնվացավ» բարենորոգում հնչեղ բառով: Տիրադավներից լավ ո՞վ կարող է չափել նրանց գործած մեղքի ծանրությունն ու չափը: Նրանք հասկանում են, որ մեզ կամ Վեհափառին չեն պատասխան տալու, այլ՝ Բարձրյալին, որի երդվյալ եւ օծյալ զավակներն էին մի ժամանակ: Նրանց խեղճացած տեսքը, անհոդաբաշխ թոթովանքները՝ որպես արդարացման ելույթներ, վկայում են, որ իրենց ուրացման պատիժը նրանք երկնային Տիրոջից են սպասում: Նիկոլի՞ց վախեցաք, թե՞ ձեր գործած մանրմունր երկրային մեղքերից: Վախկոտնե՛ր, դուք երբեք էլ արժանի չեք եղել ձեր կոչմանը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԴԱՑԵՔ ԼԵՎՈՆԻ ՈՂԲԸ՝ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՈՂԲԻ ՆՄԱՆ

Բազմաթիվ գրքերի հեղինակ Լեւոն Ջավախյանը վերջերս հրատարակեց «Տուն գնացող արեւը» գիրքը, որտեղ, իր ոճին հարազատ, գրում է անկեղծ, զգացմունքային, խոհափիլիսոփայական ոճով: Գրում է լռեցու պարզամտությամբ՝ իր ապրած, զգացած թեմաների մասին, գրավիչ, հյութեղ շարադրանքով՝ ընթերցողին պարգեւելով մեծ հաճույք: Նաեւ մեծ ցավով է գրում Արցախի կորստի մասին. «Բա յոթանասուներկու տարի ապրեմ, որ տասնյակ դարեր ապրած Արցախի գոյության ավա՜րտը տեսնեմ»: Գրքի էջերը ողողված են հեղինակի մղկտացող ողբով, անթիվ զոհերի, հողերի կորստի ցավով եւ սպասվող նոր արհավիրքների տագնապով:

Ջավախյանը մեծ հայրենասեր է, նա պատմագրի ճշտապահությամբ է շարադրել իր գիրքը: Զոհված զինվորին նվիրված ամեն տողի մեջ ցավ կա՝ իր հարազատ զավակի կորստի չափ վիշտ: Անասելի ծանր է հեղինակի համար Հայաստան աշխարհին սպառնացող վտանգը: Որքան էլ վերլուծեմ Ջավախյանի գրքի գրավիչ հատվածները, Լեւոնից լավ չեմ գրի: Նա գրում է. «Ինչքան գրավիչ ես կորստյանի երկյուղիս տագնապներում, ի՜նչ անեմ, չքնաղ իմ երկիր, թաշկինակի հանգույն պստլիկ աշխարհ՝ քեզ գրպանումս պահեմ, դնեմ սրտիս, թե՞ աչքերիս.... Ախ, ոնց կուզեի վշտերս փարատեմ, ո՞վ կյանքիդ հետ խաղաց, ո՞ւմ ձեռքն ընկար, քեզ ո՞վ անդունդի եզրին հասցրեց»: Կարդում եւ հասկանում ես, որ մարդը պետք է մեծ սիրտ, մեծ սեր եւ նվիրվածություն ունենա իր ապրած հողի հանդեպ, որ այսպես գրի:

«Տուն գնացող արեւը», ես կասեի, պատմական գիրք է: Աստված չանի, որ ներկայիս կառավարիչներն իրենց ձեւով գրեն այսօրվա մեր պատմությունը: Ջավախյանը պատմական առաջին գիրքն է գրել՝ կործանման եզրին հասած Հայաստանի մասին: Սա Լեւոնի ողբն է՝ նման Խորենացու ողբին: Իր էջերում նա հիշում է հայ ժողովրդի նվիրյալ զավակներին, հիշում է դեպքեր, զրույցներ: Շատ տպավորիչ է Սերժ Սրապիոնյանի հետ զրույցը: Լեւոնը զանգում է, ասում. «Գիշերը երազում Աստծո հետ էի հանդիպել, պատմեցի, կարծում էի՝ առողջությունից կհարցնի, հիվանդ էր ծանր, ցավերի մեջ, բայց հարցրեց՝ մեր երկրի հետագայի մասին բան չասե՞ց»: Ափսոս, նման մարդիկ շուտ են հեռանում: Երկիրը որբանում է ամեն հեռացողով:

Գրում է նաեւ նուրբ հումորով, թե ինչպես է նոր ակնոց առնում, եւ մի ապակին կորչում է, ու չի նկատում: Քայլում է փողոցով, բոլորը նայում՝ ժպտում, անցնում են, Լեւոնին թվում է, որ ինքն իր վերջին գրքով այնքան է հայտնի դարձել, որ իրեն նկատել ու ժպտացել են անցորդները, մտածում է, որ գիրքն իրեն մեծ փառք ու ճանաչում է բերել, այնինչ մարդկանց ուշադրությունը մի ակնանի ակնոցն է գրավել:

«Թող անիծյալ լինի իմ ճակատագիրը, որ կյանքիս մայրամուտին գորշ մոխիր սփռեց կարմիր արեգակիս ճանապարհին»: Նզովյալ լինեք դուք. ահա թե ինչ ցավով է գրել ամբողջ գիրքը հեղինակը, ի սեր Արցախի ինչ ցավ ու կսկիծ է ապրել: «Հայի պարծանքը, հարգն ու պատիվը» վերնագրով նա ամենաջերմ խոսքերով է հիշում Հենրիխ Մխիթարյանին: Նրան համարում է հավաքական հայի կատարյալ կերպար, ազգի որդի, պարծանք ու հպարտություն: «Հաղթանակած թշվառականը» պատումի մեջ ցավով է գրում մեր նվաստացման, ոչնչացած հեղինակության մասին, Մոսկվայի զինվորական շքերթի, թուրքի բանակի խրոխտ քայլվածքի եւ մեր Գիքորի՝ մի անկյունում չնկատվող մոռացված գոյության մասին: Այն դեպքում, երբ հայոց բանակն առանցքային դեր է ունեցել Հայրենական պատերազմում: Եվ ցավով հարցնում է. «Ախր, էս թշվառականին մեզ ո՞վ տվեց»:



«Ապերախտ Հայաստան» վերտառությամբ պատմվածքում նա գրում է իշխանությունների հակառուսական քաղաքականության մասին: Նկարագրում է Հայաստանի նախասովետական շրջանը, մեր իսկայական ձեռքբերումները: Հայաստանում ծավալվող բոլոր իրադարձություններն անցնում են հեղինակի զգայուն հոգու արձագանքով, նա մտահոգ է վաղվա օրով ու երկրի ճակատագրով, բայց կա նաեւ հավատ՝ հայի հավաքական կերպարի եւ հաղթանակի հանդեպ: Գիրքն ընթերցվում է մի շնչով, որովհետեւ իրական է՝ դա այն է, ինչ մենք ապրել ենք վերջին ութ տարիներին:

Վերջաբանում գրում է.
«Մեր Արեգակը տուն է գնում,
Սպասենք արեւածագին»:

Վալենտինա ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

Էդիկ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

Ազգմաքաղաքական ղեկավարություն, իշխանություն՝ այս բառի բուն իմաստով, Հայաստանում վաղուց գոյություն չունեն: Դիցուք՝ ՔՊ-ն, իր ղեկավարով, 2021 -ից սկսած, որպես քաղաքական էլեմենտ բացակայում է Հայաստանի ներքաղաքական կյանքից: Եվ ինչո՞ւ միայն ներքաղաքական: Տնտեսական կյանքում կմն: Սոցիալական ոլորտում, առողջապահության ոլորտում, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտներում կմն: Պաշտպանության ու գյուղատնտեսության ոլորտների մասին էլ կլռեմ: Չկան… Էն ծույլիկ աշակերտի պես բացակա են: Փոխարենը՝ ՔՊ-ն ու նրա առաջնորդը միշտ ներկա են դատախազությունում, ոստիկանությունում, ԱԱԾ-ում, ՔԿ-ում, հակակոռուպցիոնում, դատավորների կողքին, ԲԴԽ-ում, հարկայինում, ՄԻՊ-ի շրջակայքում եւ նման այլ տեղերում: Ու խոսում, անվերջ խոսում են այն մասին, թե իրենք երկիր են ղեկավարում, արտաքին քաղաքականություն են վարում, օրենք են ընդունում, ինչ-որ բաներ են զարգացնում: Վերջերս էլ եկեղեցում են հայտնվել եւ, իբր, մեր հոգեւոր կյանքն են բարեկարգում, հասկանում ես… Դուք լսած կայի՞ք, որ վարչապետը կոնդակ գրի: Գրել է, այն էլ՝ 2 հատ: Առաջին կոնդակով հայտարարել է, որ չի ընդունում կաթողիկոսի որոշումը՝ թեմական առաջնորդ փոխելու մասին, իսկ երկրորդով՝ պաշտոնալույծ արված «սրբազանին» կրկին կարգել է «սրբազան» ու թեմը վստահել նրան: Վարչապետ մի ասա, մի կրակ ասա… Ասում ես՝ սա շատ խնդալու է, ամոթ է, թքում-մրում ես, տանձին չի, ասում է՝ անձրեւ է գալիս: Թե բա՝ դոմփում ա… Բայց փորձիր իրեն հարցնել՝ դու, ինչ է, սո՞ւրբ ես, չե՞ս դոմփում… Իսկույն դատի է տալիս, թերթի այդ անմեղ հարցադրումը դարձնում կորդեբալետ: Բա քաղաքականությամբ զբաղվողն այդպիսի վարք կդրսեւորի՞:

Մի երկու օր առաջ լրագրողներով կառավարությունում էինք: Բրիֆինգ էր տալու: Ինքն ինչ հայտարարել էր հանրության առաջ ու գրել իր գրքում՝ դրեցինք դեմը: Թալանից ու պարգեւատրումներից էլ հետաքրքրվեցինք… Մի քանի րոպեանոց բրիֆինգի ընթացքում լրագրողները դարձան նրա թշնամին… Էլ գլուխը քորել, էլ՝ հետեւը, էլ դեմքը ծռմռել, էլ աչքերը ոլորել, էլ լրագրողներին սպառնալ… Այսքան բանից հետո էլ չհանգստանալով՝ զանգել է Ալեն Սիմոնյանին, թե՝ պատժիր այդ լրագրողներին: Եվ այդ չստացված բրիֆինգի հաջորդ օրը լրագրողներին տառացիորեն ծեծուջարդով դուրս վռնդեցին ԱԺ-ից: Բա քաղաքականությամբ զբաղվողը նման վարք կդրսեւորի՞: Ինչ էր պատահել, լրագրող էինք, էլի, հո զինված բանդա չէի՞նք, որ մեզ հետ այդպես վարվեր: Հիմա էլ դարձել ենք նրա չկայացած թիմի բերանի ծամոնը… Թե բա՝ լրագրությունը Հայաստանում մեռավ: Այ, այս աստիճանի դուռակ են: Հասկանո՞ւմ եք՝ ինչ եք ասում, արա… Կարո՞ղ եք մի երկիր ցույց տալ, որտեղ լրագրություն ու լրագրող չլինեն: Այնպես որ, եթե լրագրությունը Հայաստանում մեռել է, ուրեմն Հայաստանն էլ է մեռած, իսկ դուք, որպես Հայաստանի իշխանություն, առավել եւս: Երանի սրանք, ոստիկանության, դատախազության, ԱԱԾ-ի, դատարանի, եկեղեցու, լրագրողների եւ այլոց գործերին միջամտելով, կարողանային իմիտացիա ստեղծել, թե քաղաքականությամբ են զբաղվում: Ախր, դա էլ չի ստացվում իրենց մոտ: Այս վերջին ամենաաղմկոտ գործը վերցնենք: Էն Սամվել Կարապետյանը մի օր բանտում է քնում, մի օր՝ տանը: Դատապաշտպանները դատարանից նրան բերում են տուն, ԱԱԾ-ն գալիս, հետ է տանում բանտ, դատապաշտպաններն էլի բերում են տուն: Ես արդեն կասկածում եմ, որ պարոն Սամվել Կարապետյանը բանտարկյալ է, այն էլ՝ քաղաքական բանտարկյալ: Զգում եք, չէ՞, թե ինչ ք..-ի մեջ է գցել իրավապահներին՝ ԱԱԾ-ից մինչեւ դատախազ ու դատարան: Բա քաղաքականությամբ զբաղվող իշխանությունը մասխարա կդառնա՞ հանրության առաջ:

Ալեն Սիմոնյան… Թվում է՝ քաղաքական լուրջ դեմք է, ԱԺ նախագահ, ֆլան, ֆստան, աշխատակազմ ունի, պադավատ, ախրանա, լիքը փող… Այս մարդու քաղաքական երեւակայությունը, ուրեմն, «հետույք» բառից այն կողմ չի անցել: Էն խեղճ Նարեկ Սամսոնյանին, այդ բառն օգտագործելու համար, դարձրեց քաղբանտարկյալ: Շարքային քաղաքացու ուղեղում էլ, հասկանում ես, կարճ միացում է տեղի ունենում՝ եթե Նարեկը քաղբանտարկյալ է, ուրեմն Ալենն էլ քաղաքական գործիչ է: Մինչդեռ ո՞ւր է այնտեղ քաղաքական գործիչ:

Ալենի նման մեկն էլ վարչապետի աշխատակազմում է նստում, կարծեմ՝ աշխատակազմի ղեկավարն է: Գիտե՞ք ինչից էր երեկ ուշաթափվելու աստիճան ուրախացել: Չե՞ք իմացել… Իր ֆեյսբուքյան տնամերձում գրել էր, որ դատական ատյաններում հաղթել է «Հրապարակին» եւ ստիպել է իրենից ներողություն խնդրել՝ զրպարտության համար… Դե եկ ու հայտնի մականունով այս երեւույթին բացատրիր, որ վարչապետ շեֆիդ մամլիչի տակ հայտնված դատարանում «գործ կրելը» ոչ թե իր, այլ վարչապետի «շնորհքն» է, որովհետեւ այս երկրում այնպիսի դատավոր չկա, որ նրա ասածը չանի: Հետեւաբար, մի քիչ համեստությունը չէր խանգարի, մանավանդ, որ իրեն ու իր վարչապետին «զրպարտելը» շատ դժվար գործ է… Ինչ էլ ասես՝ իրենց հասնում է, ու արժանի են: Արցախի գլուխն ուտողներին, Հայաստանից հսկայական տարածքներ օտարողներին, բանակը քանդողներին, թոշակառուին մինչեւ վերջ «քցողներին», Եկեղեցին հարամողներին, Հաքան Ֆիդանի զոնտիկի տակ հայտնվածներին ի՞նչ ասես, որ կոչվի «զրպարտություն»: Իսկ «Հրապարակն» ընդամենը մի նախադասություն էր գրել, որ «Երեւանի կառավարման հարցերում ակտիվ դերակատարում ունի նաեւ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը»:

Ամփոփենք. հունիսին ՀՀ-ում կանցկացվեն ԱԺ ընտրություններ: ՔՊ-ն ու նրա առաջնորդը, այսպես կոչված՝ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունն ու իշխանությունը Հայաստանի քաղաքական դաշտից բացակա են եւ քաղաքականություն վերադառնալ ոչ այն է՝ չեն ուզում, ոչ այն է՝ չեն կարողանում: Փոխարենը նրանց մեջ մեծ է ցանկությունը՝ մի կերպ վերարտադրվել, պահել պաշտոններն ու կուտակած հարստությունը: Հիասթափեցնեմ ձեզ, պարոնայք ՔՊ-շնիկներ՝ դա ձեզ չի հաջողվելու: Դուք ավելի լավ է զբաղվեք ձեր կառավարման տարիների ավերիչ հետքերը մաքրելու գործով, քանի դեռ ձերն են դատախազը, ԱԱԾ-ն, ոստիկանությունը, դատարանները, ՔԿ-ն, հակակոռուպցիոնը, հարկայինը եւ մնացյալ խայտառակությունները:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 20.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԵՌԱՑՆԵԼՆ Է

Գալուստ
ՍԱՐԳՍՅԱՆ

Բոլորիս համար էլ պարզ է, որ երկրի համար գոյութենական նշանակություն ունեցող 2026-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավն այլեւս սկսված է: Պարզ է նաեւ, որ այդ ընտրությունները եւ դրա նախընտրական քարոզարշավը ո՛չ խաղաղության եւ ո՛չ էլ ժողովրդավարության մասին չեն:

Ինչպես այդ ընտրությունները, այնպես էլ ողջ նախընտրական քարոզարշավը ոչ թե պատերազմի եւ խաղաղության, բռնապետության եւ ժողովրդավարության միջեւ ընտրություն են լինելու, այլ Հայաստանի Հանրապետության՝ թուրք-ադրբեջանական տանդեմից վասալային կախվածություն ունենալու կամ չունենալու մասին են: Այս տեսակետից հաշվի առնելով Նիկոլի ու իր խմբակի արած-չարածը՝ կարող ենք արձանագրել, որ այդ ընտրություններն առաջին հերթին Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության թիվ մեկ սպառնալիքին՝ Փաշինյան Նիկոլին իշխանությունից հեռացնելու եւ նիկոլիզմը Հայաստանից արմատախիլ անելու կամ չանելու մասին են լինելու:

Հետեւաբար, այս նախընտրական քարոզարշավում ընդդիմության առաջին գործը, թերեւս, ոչ թե Նիկոլի հրահանգով կազմակերպվող անօրինական ձերբակալությունները կամ եկեղեցու դեմ նրա սանձազերծած արշավները դատապարտող հայտարարություններ անելն է, այլ երկրի ներքին եւ արտաքին քաղաքականությունը՝ պարտվելու եւ հանձնվելու պատմություն դարձնող նրա ձեռնարկներին հակադրվելն ու դրանք թույլ չտալը:

Իսկ դրա համար առաջին բանը, որը պետք է անի ընդդիմությունը, հասկանալն է, որ Նիկոլին ու իր խմբակին հաղթելու տեղը ո՛չ ընտրությունների օրը եւ ո՛չ էլ ընտրատեղամասերը չեն: Այն, ինչ այդ օրը կատարվելու է ընտրատեղամասերում, ընդամենը երկրում մինչ այդ ձեւավորված իրավիճակի ֆիքսումն է լինելու: Իսկ ընդդիմության հաղթելու եւ Նիկոլի պարտվելու պատմությունը մինչեւ ընտրությունների օրը գրվող ու դրա մասին պատմություն է:

Հետեւաբար, եթե օրվա ընդդիմությունը ոչ թե պայքարի իմիտացիա ստեղծելու, այլ իրոք այս իշխանություններին իշխանությունից հեռացնելու համար է պայքարում, ապա նա այսօր պետք է մտածի ոչ թե ընտրությունների բուն օրվա, այլ մինչեւ ընտրությունների օրը երկրում իրավիճակ փոխելու մասին:

Այո, մտածի ու սովորի: Սովորի, որ իշխանություններին միայն տաղավարներում ելույթներ ունենալով հաղթել չի լինի: Նրան հաղթելու համար պետք է հավատավոր ժողովրդով գնացվի ու եկեղեցուց ապօրինի խլված Հովհաննավանքի բանալիները կարգալույծ եղած քահանայից վերցվի, պետք է իշխանությունների կողմից անօրինաբար ձերբակալված ցանկացած հայորդու համար հասարակական ընդվզում կազմակերպվի, պետք է իշխանության ցանկացած անօրինական քայլին համարժեք քայլով պատասխանվի:

Հակառակ դեպքում օրվա ընդդիմությունը թող չփորձի իր ապաշնորհությունն ու անճարակությունը ժողովրդի՝ «փողոց դուրս չգալու» կամ «երկիրը ցնցումների չտանելու» մասին խուճուճ պատմություններ պատմելով արդարացնել: Թող չփորձի, որովհետեւ, եթե ճիշտ է, որ երկիրը ցնցումներից զերծ պահելն իշխանությունների պարտականությունն է, ապա նույնքան էլ ճիշտ է, որ իր պարտականությունները չկատարող իշխանությանն իշխանությունից հեռացնելու իրավունքն էլ ընդդիմությանն է: Ու նա պետք է իրացնի իր այդ իրավունքը, մանավանդ որ ժողովուրդը պատրաստ է դրան: Մանավանդ որ ժողովուրդը սպասում է դրան:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am